

## Տեղեկանք

**Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. հունվարի 12-ի N 122-Ն որոշման N 2 հավելվածի 120-125 կետերով սահմանված գերակա խնդրի կատարման արդյունքների մասին**

Գերակա խնդիրը	Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը	2017 թվականի ընթացքում կատարված աշխատանքները
<p>120. Հայաստանի Հանրապետությունում սիրիահայերի և իրաքահայերի ինտեգրման գործընթացի արագացում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Հայաստան տեղափոխված սիրիահայերի և իրաքահայերի խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքների համակարգում.</li> <li>- Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նիստերի կազմակերպում.</li> <li>- սիրիահայերի և իրաքահայերի կրթական, մշակութային, սոցիալական, տնտեսական ինտեգրման խնդիրների լուծմանը նպաստող ծրագրերի մշակում և իրականացում.</li> <li>- սիրիահայերի բնակարանային խնդիրների լուծման նպատակով աջակցության տրամադրում.</li> <li>- սիրիահայերի զբաղվածության խնդրի լուծման նպատակով աջակցության տրամադրում, մասնագիտական վերապատրաստումների իրականացում.</li> <li>- աջակցության տրամադրում</li> </ul>	<p>Շարունակվում է «Հայաստանի Հանրապետությունում սիրիահայերի և իրաքահայերի ինտեգրման գործընթացի արագացում» ծրագրի իրականացումը՝ ընդգրկելով բնակության երկրների՝ արտակարգ իրավիճակներում հայտնվելու հետևանքով Հայաստան տեղափոխված հայերի ինտեգրման գործընթացին նպաստող, ինչպես նաև հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ և ձեռնարկներ:</p> <p><b>1. Փետրվարի 13-ին, ապրիլի 5-ին, հունիսի 27-ին, հոկտեմբերի 6-ին և դեկտեմբերի 18-ին</b> տեղի են ունեցել Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի հերթական նիստերը, որոնց շրջանակներում քննարկվել են հետևյալ հարցերը.</p> <ul style="list-style-type: none"> <li>- <i>Սիրիայում և Իրաքում տիրող իրավիճակի և հայ համայնքների խնդիրների մասին. զեկուցող՝ Արմեն Պապիկյան, ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ.</i></li> <li>- <i>2016 թվականին ՀՀ քաղաքացիություն և կացության կարգավիճակ ստացած սիրիահայերի վերաբերյալ տեղեկատվության, ինչպես նաև ոլորտում առկա խնդիրների և հետագա անելիքների մասին. զեկուցող՝ Մնացական Բիչախյան, ՀՀ ԿՍ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետ.</i></li> <li>- <i>Սիրիահայերի հիմնախնդիրների մասին (կատարված աշխատանքներ, նախատեսվող ծրագրեր). զեկուցող՝ Քրիստոֆ</i></li> </ul>

	<p>սիրիահայ առնվազն 400 սովորողի ուսման վարձավճարների փոխհատուցման հարցում.</p> <ul style="list-style-type: none"> <li>- սիրիահայերի առողջապահական խնդիրների լուծմանն աջակցություն՝ պետական պատվերի շրջանակներում և միջազգային, համահայկական, բարեգործական կազմակերպությունների կողմից տրամադրվող միջոցներով.</li> <li>- սիրիահայերի հիմնախնդիրներով զբաղվող կառույցների առնվազն 3 միջոցառմանն աջակցության տրամադրում.</li> <li>- աջակցության տրամադրում Հայաստանում գործող սփյուռքահայերի հասարակական միավորումների գործունեությանը.</li> <li>- սիրիահայերի խնդիրների հանրային իրազեկում, սոցիալական գովազդների, հեռուստառադիոհաղորդումների, կրթական, ճանաչողական ծրագրերի միջոցով ինտեգրման գործընթացի արդյունավետության բարձրացում:</li> </ul>	<p><i>Բիերվիրթ, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ.</i></p> <ul style="list-style-type: none"> <li>- <i>Կատարված աշխատանքների և նախատեսվող ծրագրերի մասին. զեկուցող՝ Մովսես Պողոսյան, Հայաստանում Գերմանական Կարմիր Խաչի Բաղեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության (ԳԿԽ ԲՎԵԿ) մասնաճյուղի գրասենյակի տնօրեն.</i></li> <li>- <i>Սիրիահայերի բուժօգնության կազմակերպման ուղղությամբ կատարված աշխատանքների և հետագա անելիքների մասին. զեկուցող՝ Տիգրան Մահակյան, ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ.</i></li> <li>- <i>Սիրիահայ գործարարների վերապատաստման և նրանց բիզնեսի կայացմանն ուղղված ծրագրերի մասին. զեկուցող՝ Տիգրան Խաչատրյան, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ.</i></li> <li>- <i>Սիրիահայերին ցուցաբերած աջակցության և նախատեսվող ծրագրերի մասին. զեկուցող՝ Մանե Խաչատրյան, Ամերիկայի հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի ծրագրի համակարգող.</i></li> <li>- <i>Սիրիահայերի տնտեսական ինտեգրման ուղղությամբ իրականացված և նախատեսված ծրագրերի, ինչպես նաև տնտեսական ինտեգրման աշխատանքային խմբի գործունեության մասին. զեկուցող՝ Հանս Յոհաքիմ Ջիննկանն, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (GIZ) ծրագրի ղեկավար.</i></li> <li>- <i>Երևանաբնակ սիրիահայերի սոցիալական աջակցության ծրագրերի մասին. զեկուցող՝ Ռուզաննա Զաքարյան, Երևանի քաղաքապետարանի սոցիալական ապահովության վարչության պետ.</i></li> <li>- <i>Սիրիահայերին ցուցաբերած աջակցության և նախատեսվող</i></li> </ul>
--	---	--

		<p>ծրագրերի մասին. զեկուցող՝ Աննա Եղիազարյան, Հայկական կարմիր խաչի ընկերության գլխավոր քարտուղար.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Միրիահայ գործարարների գործունեության և միության առաջիկա ծրագրերի մասին. զեկուցող՝ Ներսես Քիվո, «Միրիահայերի միություն» ՀԿ նախագահ.</li> <li>- Միրիահայերին ցուցաբերած աջակցության և նախատեսվող ծրագրերի մասին. զեկուցող՝ Հովիկ Եորդեկյան, ՀԲԸՄ հայաստանյան գրասենյակի փոխտնօրեն.</li> <li>- Միրիահայերի հետ տարվող աշխատանքների մասին. զեկուցող՝ Անահիտ Գասպարյան, «ԱՄՔՈՐ Հայաստան» հիմնադրամի Միրիահայերի աջակցության ծրագրերի համակարգող.</li> <li>- Երևանի դպրոցներում սիրիահայ երեխաների ինտեգրման գործընթացի մասին. զեկուցող՝ Աննա Ստեփանյան, Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության պետ.</li> <li>- Միրիահայ երեխաների ամառային հանգստի կազմակերպման մասին. զեկուցող՝ Լևոն Անտոնյան, ՀՀ ՄԼ աշխատակազմի Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների վարչության պետ.</li> <li>- Միրիահայերի իրավական աջակցության ծրագրերի մասին. զեկուցող՝ Հասմիկ Հակոբյան, Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA/ROLI) հայաստանյան ներկայացուցչության փոխտնօրեն.</li> <li>- Միրիահայերին ցուցաբերած աջակցության և նախատեսվող ծրագրերի մասին. զեկուցող՝ Լուսինե Ստեփանյան, «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ի «Միգրացիա և զարգացում» և սիրիահայերի աջակցության ծրագրերի ղեկավար.</li> <li>- Միրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2018 թվականի աշխատանքային ծրագրի ներկայացում. զեկուցող՝ Ֆիրդուս</li> </ul>
--	--	--

		<p><i>Չաքարյան, ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավար:</i></p> <p><i>- Ընթացիկ հարցեր:</i></p> <p><b>2. Հունվարին 18-ին, փետրվարի 6-ին և մարտի 24-ին</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը, որպես աշխատանքային խմբի անդամ, մասնակցել է Հայաստանում բնակվող սիրիահայերի համար բժշկական աջակցության ծրագիր իրականացնելու նպատակով «Իզմիրյան» հիմնադրամի նախաձեռնությամբ ստեղծված աշխատանքային խմբի համապատասխանաբար առաջին, երկրորդ և երրորդ հանդիպումներին:</p> <p><b>3. Փետրվարի 9-10-ը</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը կազմակերպել է «Հայաստանում ներդրումներին սփյուռքահայերի մասնակցությունը» և «Զբոսաշրջության զարգացումը Հայրենիքում և սփյուռքահայերի մասնակցությունը...» կլոր-սեղան քննարկումներ, որոնց մասնակցել են Հայաստանում հաստատված շուրջ <b>30</b> սիրիահայ և իրաքահայ գործարարներ:</p> <p><b>4. Մարտի 1-2-ը</b> «Կանանց ձեռներեցության խթանման և զարգացման կենտրոն» և «Միրիահայերի միություն» հասարակական կազմակերպությունները Հայաստանի ամերիկյան համալսարանում կազմակերպել են Կանանց ձեռներեցության ցուցահանդես, որին մասնակցել են սիրիահայ <b>46</b> կին ձեռներեցներ և ձեռագործ վարպետներ:</p> <p><b>5. Մարտի 5-ին</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը և «Միրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպությունն ապահովել են սիրիահայ <b>30</b> երեխաների մասնակցությունը Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում կայացած պատանի երկրապահ</p>
--	--	--

		<p>կամավորականների երդման արարողությանը:</p> <p><b>6. Մարտի 6-7-ը</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը և «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպությունը Կանանց միջազգային օրվա առթիվ իրականացրել են «Սիրիահայ մշակույթի շունչը Երևանում» ավանդական դարձած բարեգործական ցուցահանդես-տոնավաճառը Երևանի պետական համալսարանի 8-րդ ուսումնական մասնաշենքի (Հայ բանասիրության ֆակուլտետի) նախասրահում՝ <b>60-ից ավելի</b> ձեռագործ վարպետների և հրուշակագործների մասնակցությամբ:</p> <p><b>7. Մարտի 10-ին</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը և «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպությունը Կանանց միջազգային օրվա առթիվ «Առնո Բաբաջանյան» համերգասրահում իրականացրել են «Մայր իմ անուշ...» խորագրով համերգը՝ սիրիահայ և իրաքահայ շնորհալի երեխաների մասնակցությամբ:</p> <p><b>8. Մարտի 17-ին</b> «Իզմիրյան» բժշկական կենտրոնում տեղի է ունեցել «Հայաստանաբնակ կարիքավոր սիրիահայերի բժշկական աջակցություն» ծրագրի մեկնարկի և Համագործակցության հուշագրի ստորագրման արարողությունը: Ծրագիրը համաֆինանսավորվում է «Իզմիրյան» հիմնադրամի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից, իսկ գործընկեր կառույցներն են ՀՀ սփյուռքի նախարարությունը, ՀԲԸՄ հայաստանյան ներկայացուցչությունը, «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» և «Հալեպ» հայրենակցական</p>
--	--	--

		<p>բարեսիրական հասարակական կազմակերպությունները: Ծրագրի նպատակն է անվճար բժշկական օգնություն տրամադրել 2012 թվականից ի վեր սիրիական պատերազմի հետևանքով Հայաստանում բնակություն հաստատած կարիքավոր սիրիահայերին, որոնց անհրաժեշտ բժշկական օգնությունը ներառված չէ կամ մասնակիորեն է ներառված պետական պատվերի շրջանակներում: Ծրագրի շրջանակներում ապրիլի 1-ից մինչև դեկտեմբերի 25-ը <b>311</b> սիրիահայեր ստացել են անվճար բուժօգնություն:</p> <p><b>9. Մարտի 27-ին</b> ՀՀ կառավարության նիստերի մեծ դահլիճում կազմակերպվել է մերձավորարևելյան երկրներից Հայաստան տեղափոխված սփյուռքահայերի՝ մասնավորապես սիրիահայերի հանդիպումը ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի հետ:</p> <p><b>10. Մարտի 28-ին</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը, որպես աշխատանքային խմբի անդամ և համակարգող, մասնակցել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) նախաձեռնությամբ իրականացված՝ Հայաստանում սիրիացի փախստականների տնտեսական ինտեգրման հարցերով աշխատանքային խմբի վեցերորդ հանդիպմանը:</p> <p><b>11. Ապրիլի 13-ին և 14-ին</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը և «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպությունը Սուրբ Հարության տոնի առթիվ «ԵՐԵՎԱՆ ՄՈՒ» առևտրի և զվարճանքի համալիրում իրականացրել են «Սիրիահայ մշակույթի շունչը Երևանում» ավանդական դարձած բարեգործական ցուցահանդես-տոնավաճառը՝ <b>60-ից ավելի</b> ձեռագործ վարպետների և հրուշակագործների մասնակցությամբ:</p>
--	--	---

		<p><b>12. Ապրիլի 22-ին</b> սիրիահայ բժիշկները Հաղարծին վանական համալիրի տարածքում մասնակցել են «<i>Armenian Tree Project</i>»-ի հետ համատեղ ՀՀ սփյուռքի նախարարության կողմից կազմակերպված ծառատունկին:</p> <p><b>13. Ապրիլի 23-ին</b> սիրիահայ երիտասարդները մասնակցել են դեպի Օիժեռնակաբերդի հուշահամալիր կազմակերպված ավանդական ջահերով երթին:</p> <p><b>14. Ապրիլի 27-ին</b> ՀՀ սփյուռքի նախարարության միջնորդությամբ Հայոց բանակում ծառայող 3 զինվոր ունեցող սիրիահայ Կազանջյան ընտանիքը դրամական պարգև է ստացել ԱՄՆ «Հովնանյան» վարժարանի 7 սաների կողմից:</p> <p><b>15. Ապրիլի 28-ին</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը կազմակերպել է «Սփյուռքի գորակցությամբ» խորագրով կլոր սեղան-քննարկում, որին մասնակցել են նաև սիրիահայ և իրաքահայ գործարարները:</p> <p><b>16. Մայիսի 3-ին</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը մասնակցել է «Իզմիրյան» հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Հայաստանաբնակ կարիքավոր սիրիահայերի բժշկական աջակցություն» ծրագրի հետագա համատեղ աշխատանքների վերաբերյալ քննարկմանը: Ծրագրի շրջանակներում ս.թ. ապրիլ-հունիս ամիսներին <b>61</b> սիրիահայեր ստացել են անվճար բուժօգնություն:</p> <p><b>17. Մայիսի 5-ին</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը «Երևան էքսպո» ցուցահանդեսային համալիրում կազմակերպել է Հայաստանում արդյունաբերության ոլորտում սփյուռքահայ ներդրողների արտադրանքների ցուցահանդես-վաճառք, որին մասնակցել են սիրիահայ <b>16</b> գործարարներ:</p>
--	--	---

		<p><b>18. Մայիսի 16-ին 10</b> սիրիահայեր «Շարմ Հոլդինգ»-ում մասնակցել են «Կյանք ու կռիվ-2» ֆիլմի փակ ցուցադրությանն ու ֆիլմի նկարահանող խմբի և դերասանական կազմի հետ հանդիպմանը:</p> <p><b>19. Մայիսի 28-ին</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը և «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպությունը Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրում իրականացրել են «Սիրիահայ մշակույթի շունչը Երևանում» ավանդական դարձած բարեգործական ցուցահանդես-տոնավաճառը՝ սիրիահայ <b>75</b> ձեռագործ վարպետների և հրուշակագործների մասնակցությամբ:</p> <p><b>20. Հունիսի 2-ին</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի հետ համատեղ կազմակերպել է սիրիահայ <b>20</b> երեխաների այցը Երևանի կենդանաբանական այգի:</p> <p><b>21. Հունիսի 18-ից հուլիսի 1-ը</b> սիրիահայ <b>32</b> երեխաներ մասնակցել են Սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության «Արի տուն» ծրագրի առաջին փուլին:</p> <p><b>22. Հունիսի 22-ին</b> ՀՀ սփյուռքի նախարարությունում կայացել է Երևանում, ինչպես նաև ՀՀ մարզերում բնակվող սիրիահայ կարիքավոր <b>8</b> ընտանիքների հանդիպումը ԱՄՆ ՀԲԸՄ «Մանուկյան-Դեմիրճյան» վարժարանի սաների հետ: Վերջիններիս կողմից սիրիահայ յուրաքանչյուր ընտանիքին տրամադրվել է <b>375-ական ԱՄՆ դոլար</b> գումար:</p> <p><b>23. հունիսի 26-ին</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը մասնակցել է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցած՝</p>
--	--	---



		<p>«Սիրիահայերի հիմնահարցեր. Պատմություն և արդիականություն» խորագրով հանրապետական գիտաժողովին:</p> <p><b>24. Հունիսին</b> սիրիահայ <b>35</b> երեխաներ մասնակցել են Երկրապահ կամավորական միության կողմից Սևանում կազմակերպվող ամառային ճամբարին:</p> <p><b>25. Հուլիսի 4-ին</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը, որպես աշխատանքային խմբի անդամ, մասնակցել է «Հայաստանաբնակ կարիքավոր սիրիահայերի բժշկական աջակցություն» ծրագրի իրականացման նպատակով «Բզմիրյան» հիմնադրամի նախաձեռնությամբ ստեղծված աշխատանքային խմբի հերթական հանդիպմանը:</p> <p><b>26. Հուլիսի 8-20-ը</b> Հայ օգնության ֆոնդի աջակցությամբ սիրիահայ <b>25</b> երեխաներ իրենց ամառային հանգիստն անցկացրել են Հանքավանի «Արագած» ճամբարում:</p> <p><b>27. Հուլիսի 13-ին</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը, որպես աշխատանքային խմբի անդամ և համակարգող, մասնակցել է ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի (UNHCR) նախաձեռնությամբ կազմակերպված՝ Սիրիայից տեղահանված և Հայաստանում պաշտպանություն փնտրող ընտանիքների բնակարանային կարիքների ապահովմանն ուղղված կոնսորցիումի 7-րդ հանդիպմանը:</p> <p><b>28. հուլիսի 14-ին</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը մասնակցել է ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի և «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ կողմից կազմակերպված՝ «ՀՀ-ում փախստականներին և ապաստան հայցողներին մատուցվող</p>
--	--	---

		<p>բժշկական ծառայություններ. առկա խնդիրներ և հնարավոր լուծումներ» խորագրով աշխատանքային հանդիպմանը:</p> <p><b>29. Հուլիսի 26-ին</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը, որպես աշխատանքային խմբի անդամ և համակարգող, մասնակցել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) նախաձեռնությամբ իրականացված` Հայաստանում սիրիացի փախստականների տնտեսական ինտեգրման հարցերով աշխատանքային խմբի 7-րդ հանդիպմանը:</p> <p><b>30. Հուլիսին</b> ՀՀ սփյուռքի նախարարության, ՀՀ Փաստաբանների պալատի, Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության և ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի համագործակցությամբ և ԱՄՆ Պետդեպարտամենտի Բնակչության, փախստականների և միգրացիայի վարչության ֆինանսական աջակցությամբ լրամշակվել և վերահրատարակվել է «<b>Հաճախ տրվող իրավական հարցերի տեղեկատվական ձեռնարկը</b>»՝ Սիրիայից և այլ հակամարտության վայրերից Հայաստան տեղահանված անձանց համար:</p> <p><b>31. Հուլիս-օգոստոս</b> ամիսներին սիրիահայ <b>15</b> երեխաներ մասնակցել են «Արի տուն» ծրագրին:</p> <p><b>32. Հուլիս-օգոստոս</b> ամիսներին սիրիահայ երեխաները Հանքավանում մասնակցել են Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցության կողմից կազմակերպված ճամբարին:</p> <p><b>33. Օգոստոսի 3-ին</b> տեղի ունեցած նիստի ժամանակ ՀՀ կառավարությունը, ՀՀ սփյուռքի և ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունների միջնորդությամբ,</p>
--	--	--

		<p>«Սիրիահայերի միություն» ՀԿ-ին 5 տարի ժամկետով անհատույց օգտագործման է տրամադրել Կոմիտասի 49/3 հասցեում գտնվող շենքի 2-րդ մասնաշենքի 860.5 քառ. մետր մակերեսով նկուղային և 1-ին հարկի 649.2 քառ. մետր մակերեսով տարածքները՝ գործարար ծրագիր իրականացնելու նպատակով:</p> <p><b>34. Օգոստոսի 10-19-ը</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի հետ համատեղ և «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» կազմակերպության ֆինանսական աջակցությամբ ՀՀ Լոռու մարզի Վահագնաձոր գյուղի «Գուգարք» մանկական ճամբարում կազմակերպել է սիրիահայ <b>35</b> երեխաների ամառային հանգիստը:</p> <p><b>35. Սեպտեմբերի 9-ին</b> «ՄԵԴԻԱ ՕՆԻՔՍ» ընկերությունը և Զբոսաշրջության և մշակույթի պրոպագանդման հիմնադրամը ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի և Հայաստանում զբոսաշրջության զարգացման հիմնադրամի աջակցությամբ Դիլիջան քաղաքում իրականացրել են «Մշակութային վերածնունդ» արվեստների և արհեստների համահայկական փառատոնը, որին մասնակցել են նաև սիրիահայ <b>24</b> ձեռագործ վարպետներ:</p> <p><b>36. Սեպտեմբերի 10-ին</b> «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի և «People to people international» միջազգային մարդասիրական կազմակերպության հայաստանյան գրասենյակի հետ համատեղ «Բեսթ Վեսթերն Կոնգրես» հյուրանոցում իրականացվել է սիրիահայերի ձեռքի աշխատանքների բարեգործական ցուցահանդես-վաճառք՝</p>
--	--	--

		<p>սիրիահայ <b>30</b> ձեռագործ վարպետների և հրուշակագործների մասնակցությամբ:</p> <p><b>37. Մեպտեմբերի 20-ին</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը ՀՀ արտաքին գործերի նախարարության և ԱՄՆ-ում ՀՀ դեսպանության հետ համագործակցությամբ «ԺԱԿՈ» արևելյան խոհանոցի ռեստորանում կազմակերպել է Սիրիայի հայ համայնքի ներկայացուցիչների, ինչպես նաև Հայաստանում հաստատված մի շարք սիրիացիների հանդիպումը ԱՄՆ խորհրդարանական պատվիրակության հետ:</p> <p><b>38. Մեպտեմբերի 25-ին</b> կազմակերպվել է «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ի և «Գերմանա-ռուսական փոխանակում» միջազգային բարեգործական կազմակերպության միջև համագործակցության արդյունքում իրականացվող՝ «Հաղթահարենք պատերազմի հետևանքները միասին» ծրագրի շրջանակներում Հայաստան ժամանած պատվիրակության ընդունելությունը ՀՀ սփյուռքի նախարարությունում:</p> <p><b>39. Հուլիս-սեպտեմբեր</b> ամիսներին ՀՀ սփյուռքի նախարարությունն իրականացրել է «3 խորհուրդ սիրիահայից Հայաստանում բիզնես հիմնելու համար» հարցազրույցների շարքը, որի շրջանակներում հանրությանն ուղղված խորհուրդներով հանդես են եկել Հայաստանում հաջողություններ գրանցած սիրիահայ գործարարները:</p> <p><b>40. Հոկտեմբերի 3-ին</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը մասնակցել է «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» (ԱՓՇԱՏԿ) հիմնադրամի կողմից կազմակերպված՝ «Փախստականները և որակավորումների ճանաչումը» թեմայով</p>
--	--	---

		<p>սեմինարին:</p> <p><b>41. Հոկտեմբերի 5-8-ը</b> սիրիահայ 4 արձաթագործներ մասնակցել են Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ), Հայաստանի զարգացման հիմնադրամի (ՀԶՀ) և Գերմանիայի տնտեսական միավորման (DWW) հետ համատեղ «Մերիդիան» էքսպո կենտրոնում կազմակերպված ցուցահանդես-վաճառքին՝ «Junwex Yerevan Show»-ին:</p> <p><b>42. Հոկտեմբերի 11-ին</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը մասնակցել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող՝ «Սիրիացի փախստականների տնտեսական ինտեգրումը Հայաստանում» ծրագրի ելքային ռազմավարության քննարկմանը նվիրված համաժողովին:</p> <p><b>43. Հոկտեմբերի 13-15-ը</b> «Երևան էքսպո» ցուցահանդեսային համալիրում անցկացված «ԱրմՊրոդէքսպո-2017» միջազգային մասնագիտացված ցուցահանդեսին Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի աջակցությամբ իրենց մասնակցությունն են ունեցել սիրիահայ 4 արտադրողներ:</p> <p><b>44. Հոկտեմբերի 17-ին</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը մասնակցել է Հայաստանում Գերմանական Կարմիր Խաչի Բաղեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության մասնաճյուղի «Հուսո տուն» բարեգործական կենտրոնի և «Սյունիք-զարգացում» ՀԿ-ի համատեղ նախաձեռնությամբ իրականացվող՝ «Տեղահանված և սոցիալապես խոցելի խմբերի ինտեգրումը հայաստանյան աշխատանքային շուկայում մասնագիտական կրթության և աջակցության միջոցով» ծրագրի բացման արարողությանը: Ծրագրային 3 տարիների ընթացքում</p>
--	--	--

		<p><b>160</b> շահառուների համար իրականացվելու են մասնագիտական վերապատրաստումներ և դասընթացներ, ինչպես նաև տրվելու է հնարավորություն անցնել աշխատանքային փորձաշրջան հայաստանյան աշխատաշուկայում:</p> <p><b>45. Նոյեմբերի 1-ից</b> «Հալեպ» հայրենակցական բարեսիրական ՀԿ-ն ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ իրականացնում է անգլերենի անվճար առցանց դասընթացներ՝ «Yerevan MOOC Camp Coursera for refugees» ծրագրով, որի շրջանակներում սիրիահայերը և իրաքահայերը, ինչպես նաև տեղաբնակներն հնարավորություն կունենան առցանց բարելավելու անգլերեն լեզվի իմացությունը և ձեռք բերելու գիտելիքներ բիզնես անգլերենի վերաբերյալ:</p> <p><b>46. Նոյեմբերի 14-ին</b> ՀՀ սփյուռքի նախարարությունում կազմակերպվել է Արաբական Ծոցի Աստվածաշնչային ընկերության կողմից հրատարակված՝ «Երիտասարդ ընտանիքի Աստվածաշունչը» գրքի շնորհանդեսը: Գրքի 50 և 200 օրինակներ համապատասխանաբար հատկացվել են ՀՀ սփյուռքի նախարարությանը և «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ին՝ Հայաստան տեղափոխված սիրիահայ և իրաքահայ երիտասարդ ընտանիքներին տրամադրելու նպատակով:</p> <p><b>47. Դեկտեմբերի 5-ին</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը, որպես աշխատանքային խմբի անդամ և համակարգող, մասնակցել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) նախաձեռնությամբ իրականացված՝ Հայաստանում սիրիացի փախստականների տնտեսական ինտեգրման հարցերով աշխատանքային խմբի 8-րդ հանդիպմանը:</p> <p><b>48. Դեկտեմբերի 6-7-ը</b> ՄԱԿ-ի Փախստականների հարցերով</p>
--	--	---

		<p>գերագույն հանձնակատարի Հարավային Կովկասում տարածաշրջանային ներկայացուցչությունը Թբիլիսիում իրականացրել է բարեգործական ցուցահանդես-վաճառք, որին ՀՀ սփյուռքի նախարարության և ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի աջակցությամբ մասնակցել են սիրիահայ 9 ձեռագործ վարպետներ:</p> <p><b>49. Դեկտեմբերի 17-19-ը</b> «Սիրիահայերի միություն» ՀԿ-ի սիրիահայ 8 գործարարներ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) աջակցությամբ մասնակցել են Դուբայի միջազգային աշնանային ցուցահանդեսին:</p> <p><b>50. Դեկտեմբերի 19-ին</b> ստորագրվել է փոխըմբռնման բազմակողմ հուշագիր՝ Հայաստանի զարգացման հիմնադրամի, Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Սիրիացի փախստականների տնտեսական ինտեգրում Հայաստանում» ծրագրի, «Վերադարձ Հայաստան» հիմնադրամի, «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ի, «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի և «Սիրիահայերի միություն» ՀԿ-ի միջև՝ սիրիահայ գործարարներին առավել հասցեական և արդյունավետ աջակցություն տրամադրելու նպատակով: Հայաստանի զարգացման հիմնադրամը սիրիահայ ձեռներեցների բիզնեսին կնպաստի Գործարարության աջակցության իր ակումբով, որի անդամները պատրաստ են առնվազն 2 ամիս, իսկ հետագայում նաև էական զեղչերով հաշվապահական, իրավաբանական, բեռնափոխադրումների, աուդիտի, բիզնեսի գրանցման, հարկային խորհրդատվություն մատուցել: Բացի դրանից՝ Հիմնադրամը կօգնի օտարերկրյա գործընկերներ գտնել</p>
--	--	--

		<p>միջազգային ցուցահանդեսների ընթացքում:</p> <p><b>51. Դեկտեմբերի 22-23-ը</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը և «Միրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպությունը Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Երևանի քաղաքապետարանի ճեմարահում իրականացրել են «Միրիահայ մշակույթի շունչը Երևանում» ավանդական դարձած բարեգործական ցուցահանդես-տոնավաճառը՝ <b>50</b> ձեռագործ վարպետների և հրուշակագործների մասնակցությամբ:</p> <p><b>52. Դեկտեմբերի 25-ին</b> սիրիահայ <b>100</b> երեխաներ ՀՀ Նախագահի նստավայրում մասնակցել են Ամանորի տոնական միջոցառմանը:</p> <p><b>53. Դեկտեմբերի 27-ին</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը ՀԲԸՄ «Վահե Կարապետյան» կենտրոնում «Միրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի և ՀԲԸՄ-ի հետ համատեղ կազմակերպել է ամանորյա հանդիպում սիրիահայ երեխաների հետ, որի ընթացքում շուրջ <b>100</b> սիրիահայ փոքրիկների (իսկ միջոցառումից հետո՝ ևս շուրջ <b>400</b> սիրիահայ երեխայի) ՀԲԸՄ-ի և ՀՀ սփյուռքի նախարարության կողմից տրամադրվել են տոնական նվերներ:</p> <p><b>54.</b> Շարունակվել են «Հովարդ Կարազյոզյան» բժշկական բարեգործական ՀԿ-ի կողմից Հայաստան տեղափոխված սիրիահայ և իրաքահայ երեխաների համար ատամնաբուժական և ակնաբուժական անվճար ծառայությունների մատուցման աշխատանքները:</p> <p><b>55. 2017-2018</b> ուսումնական տարվա սիրիահայ <b>441</b> ուսանողների ուսման վարձավճարների <b>60%</b>-ը փոխհատուցվում է ՀՀ կառավարության, ՀԲԸՄ-ի, «Գալուստ</p>
--	--	---



		<p>Գյուլբենկյան» հիմնարկության, «Սուրբ Սարգիս» հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:</p> <p><b>56.</b> Երևանի (Ի-Վի-Էն) գինու ակադեմիան հայտարարել է <b>2017-2018</b> ուսումնական տարվա ընդունելություն «Գինեգործություն և գինու բիզնես» կրթական ծրագրի համար: Այս տարի Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) ֆինանսական աջակցությամբ սիրիահայ դիմորդների համար նախատեսված են մինչև 6 հատուկ կրթաթոշակներ:</p> <p><b>57.</b> Պատրաստվել և հրատարակության է տրվել ՀՀ սփյուռքի նախարարության, ՀՀ Փաստաբանների պալատի, Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության և ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի համագործակցությամբ և ԱՄՆ Պետդեպարտամենտի Բնակչության, փախստականների և միգրացիայի վարչության ֆինանսական աջակցությամբ լրամշակված և վերահրատարակված «Հաճախ տրվող իրավական հարցերի տեղեկատվական ձեռնարկ»-ի արևմտահայերեն տարբերակը՝ Սիրիայից և այլ հակամարտության վայրերից Հայաստան տեղահանված անձանց համար: Ձեռնարկի արևելահայերեն և արևմտահայերեն տարբերակները տեղադրվել են ՀՀ սփյուռքի նախարարության պաշտոնական կայքում:</p> <p><b>58. 1-ին կիսամյակում</b> ՀՀ սփյուռքի նախարարություն են դիմել <b>726</b> սիրիահայեր, ովքեր ունեցել են տարբեր ոլորտներին առնչվող <b>748</b> խնդիրներ, որոնցից <b>437-ը</b>՝ բժշկական օգնության, <b>61-ը</b>՝ աշխատանքի տեղավորման, <b>98-ը</b>՝ բնակավարձի փոխհատուցման, <b>23-ը</b>՝ կրթական, <b>46-ը</b>՝ իրավական, <b>83-ը</b>՝ այլ հարցերի վերաբերյալ:</p>
--	--	--

		<p>Խնդիրների լուծման նպատակով ուղարկվել են համապատասխան գրություններ պետական գերատեսչություններին և գործընկեր միջազգային ու հասարակական կազմակերպություններին:</p> <p><b>59.</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը շարունակում է համագործակցել սիրիահայերի հիմնախնդիրներով զբաղվող պետական մարմինների, համահայկական, միջազգային կազմակերպությունների և հոգևոր կառույցների հետ՝ «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի հետ միասին համակարգելով այլ կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի բաղադրիչների, ինչպես նաև շահառուների ընտրությունը:</p> <p>«Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ից բացի ՀՀ սփյուռքի նախարարությունը շարունակում է համագործակցությունը նաև սիրիահայերի կողմից Հայաստանում ստեղծված այլ՝ «Հալեպ» հայրենակցական բարեսիրական, «Քեսաբ» հայրենակցական միավորում, «Սիրիահայերի միություն» հասարակական կազմակերպությունների հետ:</p> <p>ՀՀ սփյուռքի նախարարությունը «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի միջոցով իրականացրել է մի շարք բարեգործական ծրագրեր.</p> <ul style="list-style-type: none"> <li>♦ «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի կողմից տրամադրված գրության հիման վրա Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցությանը պատկանող դարմանատան ատամնաբուժական ծառայությունից օգտվել է <b>15</b> սիրիահայ, ևս <b>142</b>-ին տրամադրվել է ֆինանսական</li> </ul>
--	--	--

		<p>աջակցություն՝ անհրաժեշտ բժշկական օգնություն ստանալու համար:</p> <ul style="list-style-type: none"> <li>♦ «Միրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի կողմից տրամադրված գրության հիման վրա Հայկական բարեգործական ընդհանուր միությունը ֆինանսական աջակցություն է հատկացրել <b>41</b> սիրիահայի՝ առողջապահական խնդիրների լուծման նպատակով:</li> <li>♦ <b>Հունվար-մարտ</b> ամիսներին «Միրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ում սիրիահայ կամավոր բժիշկների (մանկաբույժ, ակնաբույժ, մաշկաբան, թերապևտ) կողմից գործող շաբաթօրյա բժշկական անվճար «Դարմանատուն» ծառայությունից օգտվել է <b>650</b> սիրիահայ:</li> <li>♦ Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության հետ համատեղ իրականացվել է «Իրավաբանական աջակցություն տեղահանված և հակամարտությունից տուժած անձանց համար» ծրագիրը՝ սիրիահայ <b>100</b> շահառուների համար:</li> <li>♦ Կազմակերպվել է «Ֆինանսական համակարգը ՀՀ-ում» խորագրով դասընթաց՝ «Միրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի և Գերմանական միջազգային համագործակցության խնայողական բանկերի հիմնադրամի միջև կնքված պայմանագրի համաձայն:</li> <li>♦ <b>Հունվար-մարտ</b> ամիսներին իրականացվել են սիրիահայերին ՀԲԸՄ Ֆրանսիայի մասնաճյուղի կողմից «Միրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ին տրամադրված վերարկուների և զգեստների բաշխման աշխատանքները:</li> </ul>
--	--	--

		<ul style="list-style-type: none"> <li>♦ <b>Փետրվարի 10-ին և 14-ին</b> ՀԲԸՄ «Վահե Կարապետյան» կենտրոնում ՀԲԸՄ հայաստանյան ներկայացուցչության և «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի կողմից համատեղ իրականացվել է ամերիկահայ բարերարներ Քըրք և Արսինե Գազազյանների՝ ՀԲԸՄ Սիրիահայերի օգնության հիմնադրամին կատարած <b>25 հազար</b> ԱՄՆ դոլարի նվիրատվության բաշխումը: Ծրագրի շրջանակներում սիրիահայ կարիքավոր <b>250</b> ընտանիքներին տրամադրվել է ֆինանսական օգնություն՝ <b>100</b> ԱՄՆ դոլար գումարի չափով:</li> <li>♦ <b>Փետրվարի 20-ից</b> սիրիահայ կարիքավոր <b>500</b> ընտանիքներին են բաշխվել «ԱՄՔՈՐ Հայաստան» կազմակերպության կողմից տրամադրված վերականգնումի և ծածկոցները:</li> <li>♦ <b>Մարտի 1-ից</b> «ԱՄՔՈՐ Հայաստան» կազմակերպության ֆինանսավորմամբ սիրիահայերի համար իրականացվում են համակարգչային, նաև ֆուրջետների պատրաստման և ձևավորման դասընթացներ:</li> <li>♦ <b>Հունվար-մարտ</b> ամիսներին «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ում տեղի են ունեցել հանդիպումներ «Հովարդ Կարազյոզյան» ԲԲՀԿ-ի, Անարատ հղության հայ քույրերի միաբանության հայաստանյան մասնաճյուղի, «ԱՄՔՈՐ Հայաստան» կազմակերպության, «Իզմիրյան» և AFAF հիմնադրամների ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում քննարկվել են սիրիահայերի աջակցության ծրագրերի հետ կապված հարցեր:</li> <li>♦ <b>Ապրիլ-հունիս</b> ամիսներին «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի կողմից</li> </ul>
--	--	---

		<p>տրամադրված գրության հիման վրա Հայկական բարեգործական ընդհանուր միությունը ֆինանսական աջակցություն է հատկացրել 19 սիրիահայի՝ առողջապահական խնդիրների լուծման նպատակով:</p> <ul style="list-style-type: none"> <li>♦ <b>Ապրիլ-հունիս</b> ամիսներին իրականացվել են «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական ընկերության կողմից «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ին տրամադրված բրենդային հագուստի՝ սիրիահայերին բաշխման աշխատանքները:</li> <li>♦ <b>Ապրիլ-հունիս</b> ամիսներին իրականացվել են Լոս Անջելեսի «Գառնի» հիմնադրամի կողմից «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ին տրամադրված հագուստի՝ սիրիահայերին բաշխման աշխատանքները:</li> <li>♦ <b>Ապրիլ-հունիս</b> ամիսներին իրականացվել են ամերիկահայ Ժան Թիթիզյանի կողմից «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ին տրամադրված մեկ արկղ տղամարդկանց համար նախատեսված հագուստի՝ սիրիահայերին բաշխման աշխատանքները:</li> <li>♦ «ԱՄՔՈՐ Հայաստան» կազմակերպության ֆինանսավորմամբ սիրիահայերի համար իրականացվել են համակարգչային, նաև ֆուրջետների պատրաստման և ձևավորման եռամսյա դասընթացներ, որոնց ավարտին մասնակիցներին տրվել են վկայականներ:</li> <li>♦ «ԱՄՔՈՐ Հայաստան» կազմակերպության կողմից «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ին տրամադրված 570 հիգիենիկ փաթեթները բաշխվել են սիրիահայերին:</li> <li>♦ Հայ օգնության ֆոնդի կողմից «Սիրիահայերի</li> </ul>
--	--	---

		<p>հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ին տրամադրված սնունդը և ծածկոցները բաշխվել են սիրիահայ 250 ընտանիքների:</p> <ul style="list-style-type: none"> <li>♦ «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի և Գեղագիտության ազգային կենտրոնի պարային ստուդիայի համագործակցության արդյունքում սիրիահայ 30 փոքրիկներ պարային ստուդիայում հաճախել են հայկական ազգային պարի դասընթացներին:</li> <li>♦ «Ֆուեգո» ընկերության կողմից «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ին տրամադրված կանանց հագուստը բաշխվել է սիրիահայերին:</li> <li>♦ Իր գործունեությունն է շարունակել ՀԲԸՄ «Վահե Կարապետյան» կենտրոնում գտնվող «Կլաուդիա Նազարյան» բժշկական կենտրոնը, որտեղ սիրիահայերը ստանում են անվճար բժշկական խորհրդատվություն:</li> <li>♦ Իրականացվել են տարբեր անհատ բարերարների կողմից «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ին տրամադրված հագուստի և այլ պարագաների բաշխումը սիրիահայերին:</li> </ul> <p><b>Փետրվարի 22-ին</b> տեղի է ունեցել «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի արտահերթ ժողովը, որի ընթացքում ներկայացվել է կազմակերպության կողմից 2012-2016թթ. կատարած աշխատանքների մասին և 2017 թվականի աշխատանքային ծրագիրը: Ժողովի ընթացքում քննարկվել և միաձայն հաստատվել են կազմակերպության նոր կազմը, նոր կանոնադրությունը, ինչպես նաև կառավարման նոր կարգը:</p>
--	--	---

		<p>Հայաստան տեղափոխված սիրիահայերի համար և սիրիահայերի մասնակցությամբ իրականացված միջոցառումները լայնորեն լուսաբանվել են ՀՀ սփյուռքի նախարարության պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում, «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականում, հայաստանյան և սփյուռքյան լրատվական կայքերում:</p>
<p><b>121.</b> Հայապահպանության համար և ուժացման դեմ պայքարում սփյուռքի երիտասարդության շրջանում հայոց լեզվի իմացության մակարդակի բարձրացում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ԱՄՆ-ի արևմտյան ափում գործող հայկական ամենօրյա և մեկօրյա դպրոցների ուսուցիչների վերապատրաստում՝ տեղում</li> <li>- Երևանում հայոց լեզվի և հայագիտական առարկաների՝ թվով 30 ուսուցիչների և կրթական գործի պատասխանատուների վերապատրաստման դասընթաց՝ 4 շաբաթ տևողությամբ</li> <li>- առնվազն 100 սփյուռքահայ երիտասարդի համար Երևանում հայոց լեզվի (արևմտահայերենի և արևելահայերենի) արագացված դասընթացների կազմակերպում՝ 4 շաբաթ տևողությամբ</li> <li>- առնվազն 30 երիտասարդ առաջնորդների համար ամառային դասընթացի կազմակերպում՝ 2 շաբաթ տևողությամբ</li> <li>- 13-18 տարեկան մինչև 1000 սփյուռքահայ երիտասարդների երկշաբաթյա ճանաչողական այցելություն Հայաստան՝ «Արի տուն»</li> </ul>	<ol style="list-style-type: none"> <li><b>1.</b> ԱՄՆ Արևմտյան ափում գործող կրթական հաստատությունների ուսուցիչների վերապատրաստման նպատակով հունվարի 15-ից փետրվարի 4-ը ԱՄՆ է գործուղվել դասախոս՝ ՀՀ սփյուռքի նախարարության և Դավթյան-Մարիամյան կրթական հաստատության միջև կնքված համագործակցության հուշագրի շրջանակներում: Գործուղման ընթացքում վերապատրաստվել է 27 դպրոցի 50 հայոց լեզվի և հայագիտական առարկաների 50 ուսուցիչ:</li> <li><b>2.</b> Սփյուռքի հայ համայնքներում ազգային ինքնության պահպանմանն ու զորացմանը, երիտասարդների շրջանում հայոց լեզվի իմացության մակարդակի, հայկական կրթօջախների ուսուցիչների, կրթական գործի պատասխանատուների, ազգային երգ ու պարի խմբերի ղեկավարների որակավորման բարձրացմանը, Սփյուռքի ԶԼՄ-ների, երիտասարդական կազմակերպությունների գործունեությանը, ինչպես նաև համայնքների ինքնակազմակերպմանն աջակցելու նպատակով 2012 թվականից կազմակերպվում է «Սփյուռք» ամառային դպրոց» ծրագիրը: 2017 թվականի ծրագիրը հաստատվել է ՀՀ սփյուռքի նախարարի համապատասխան հրամանով: Սփյուռքի հայկական կազմակերպությունների, համայնքային կառույցների հետ աշխատանքներ են իրականացվել «Սփյուռք» ամառային դպրոց» ծրագրի տեղեկատվության տարածման և հայտերի հավաքագրման ուղղությամբ: Ծրագիրն իրականացվել է Երևանի պետական համասարանի հետ</li> </ol>

	<p>ծրագրով</p> <ul style="list-style-type: none"> <li>- սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և օժանդակ նյութերի, այդ թվում՝ էլեկտրոնային դասագրքերի տրամադրում (50 000 կտոր)</li> <li>- հայոց լեզվի հեռուստադպրոցի (արևելահայերեն և արևմտահայերեն) հեռուստադասերի կազմակերպում և հեռարձակում սփյուռքում (առնվազն 36 հաղորդում)</li> <li>- աջակցություն համայնքներում նոր՝ մեկօրյա դպրոցների ստեղծմանը (դասագրքերի և ուսումնաօժանդակ նյութերի տրամադրում, ուսուցիչների վերապատրաստում)</li> <li>- աջակցություն ՀԲԸՄ-ի վիրտուալ քուլեջի ունկնդիրների թվի ավելացմանը՝ տարածաշրջաններում հայոց լեզվի, հայ ժողովրդի պատմության և մշակույթի վերաբերյալ գիտելիքների առավել տարածման նպատակով, աջակցություն ունկնդիրների խմբերի ձևավորմանը Ռուսաստանի Դաշնությունում</li> <li>- աջակցություն սփյուռքահայ երիտասարդությանը՝ մայրենիի ուսուցման համացանցային հեռավար</li> </ul>	<p>համագործակցությամբ 5 ուղղություններով, որից մեկը՝ Հայոց լեզվի ուսուցիչների և կրթական գործի կազմակերպիչների վերապատրաստման դասընթացն է և անցկացվել է հուլիսի 2-29-ը Երևանի պետական համալսարանի հայագիտական հետազոտությունների ինստիտուտում: Դասընթացին մասնակցել է 58 ուսուցիչ՝ 14 երկրից:</p> <p><b>3.</b> «Սփյուռք» ամառային դպրոց» ծրագրի մյուս ուղղությունը՝ հայոց լեզվի արագացված ուսուցումն է, որն անցկացվել է հուլիսի 2-29-ը: Լեզվուսուցման դասընթացին մասնակցել է շուրջ 118 սփյուռքահայ՝ 11 երկրից: Դասընթացներն անցկացվել են արևելահայերենով և արևմտահայերենով՝ լեզվական իմացության երեք խմբերով: Ծրագրերում հաշվի են առնվել նաև բնակության երկրների լեզվական առանձնահատկությունները: Դասերն անցկացվել են ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտում:</p> <p><b>4.</b> «Սփյուռք» ամառային դպրոցի մյուս ուղղությունը Երիտասարդ առաջնորդների և համայնքային գործի կազմակերպիչների դասընթացն է, որն անցկացվել է հուլիսի 2-15-ը և մասնակցել են 35 սփյուռքահայ երիտասարդ և համայնքային գործի կազմակերպիչներ՝ 10 երկրից:</p> <p>«Սփյուռք» ամառային դպրոցի բոլոր 5 ուղղություններով դասընթացներն անցկացվել են հայերեն, որը նույնպես նպաստում է մասնակիցների՝ մայրենիով շփման հնարավորությունների ընդլայնմանը, լեզվի հաղորդակցման, խոսակցական մակարդակի բարձրացմանը:</p> <p>«Սփյուռք» ամառային դպրոցի դասավանդման գործընթացում ներգրավվել են ԵՊՀ և այլ բուհերից, ինչպես նաև Սփյուռքից հրավիրված մասնագետներ և մշակութային ճանաչված գործիչներ:</p> <p>Բոլոր ուղղություններում ուսուցանվել է ազգային երգ ու պար:</p>
--	--	---



	<p>ծրագրերը, էլեկտրոնային դասագրքերը համայնքներում տարածելու միջոցով</p> <p>- սփյուռքահայ երիտասարդության շրջանում հայոց լեզվի ուսուցմանն օժանդակելու նպատակով մրցանակաբաշխությունների, օլիմպիադաների և շարադրությունների, երիտասարդ ուսուցիչների «Մայրենիի պաշտպան» անվանակարգով մրցույթների կազմակերպում՝ Համաշխարհային հայկական կոնգրեսի և Ռուսաստանի հայերի միության հետ համատեղ</p>	<p>Ծրագրի ընթացքում կազմակերպվել են հանդիպումներ ՀՀ ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովի, ՀՀ Նախագահի ռեֆերենտ Հովհաննես Նիկողոսյանի, ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանի, հանրապետության ակնաավոր մշակութային հեղինակավոր գործիչների հետ:</p> <p>«Սփյուռք» ամառային դպրոցի բոլոր մասնակիցների համար կազմակերպվել են շրջագայություններ Հայաստանի պատմամշակութային վայրերով (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Գառնի, Գեղարդ և այլն), այցելություններ դպրոցներ, մանկապարտեզ, կրթամշակութային և նորարարական հաստատություններ («Թումո» կենտրոն), լրատվամիջոցներ, հեռուստաընկերություններ:</p> <p><b>5.</b> ՀՀ կառավարության N 4 արձանագրային որոշմամբ 2017 թվականի փետրվարի 2-ին հաստատվել է Սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության «Արի տուն» 2017 թվականի ծրագիրը և միջոցառումների ցանկը:</p> <p>Ծրագիրն իրականացվել է հունիս-օգոստոս ամիսների ընթացքում՝ 8 փուլերով, որոնց մասնակցել է 990 սփյուռքահայ պատանի ու աղջիկ՝ աշխարհի 36 երկրից: Ապրիլին կայացած հատուկ փուլին մասնակցել են Ֆրանսիայի Ալֆորվիլի «Ս. Մեսրոպ-Արապեան», Փարիզի «Դպրոցասեր» և Մարսելի «Համազգային» վարժարանների 66 աշակերտներ՝ 10 ուսուցիչների ուղեկցությամբ:</p> <p>Ծրագրի մասնակիցները, ինչպես ամեն տարի, այցելել են Հայաստանի պատմամշակութային վայրեր, թանգարաններ, Երևանի կենդանաբանական այգի, ԲՈւՀ-եր, ՀԲԸՄ վիրտուալ համալսարան և այլն:</p> <p>Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են հայոց լեզվի 5-օրյա</p>
--	--	---

		<p>արագացված դասընթացներ՝ Երևանի Ե. Չարենցի անվան թիվ 67 դպրոցում: Դասընթացներն անցկացվել են մասնակիցների լեզվական իմացության մակարդակին համապատասխան ձևավորված խմբերով: Դասերն անցկացվել են երևանյան դպրոցների հայերենի լավագույն ուսուցիչներն ու մասնագետները, ինչպես նաև՝ Սփյուռքի հայկական կրթօջախների փորձառու ուսուցիչները: Հայոց լեզվի և հայրենագիտության դասընթաց է կազմակերպվել նաև ծրագրի ճամբարային 4 օրերի ընթացքում:</p> <p><b>6.</b> ՀՀ սփյուռքի նախարարի համապատասխան հրամանով հաստատվել է Սփյուռքի կրթական հաստատություններին ուսումնական գրականության և ուսումնաօժանդակ նյութերի մշակման և տրամադրման ծրագիրը: Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և ուսումնաօժանդակ նյութերի մշակման և տրամադրման ծրագրին համապատասխան 18 հրատարակչություններից գնվել է մոտ 53.000 կտոր այբբենարան, մայրենի լեզվի, գրականության, պատմության դասագրքեր՝ իրենց աշխատանքային տետրերով, ուսումնական և մեթոդական ձեռնարկներ, ուսումնաօժանդակ նյութեր, նախադպրոցական և մանկական գրականություն, ուսումնական խաղեր, էլեկտրոնային ժամանակակից CD-ներ և DVD-ներ:</p> <p>2017 թվականին Սփյուռքի 200 կրթօջախի 37 երկրից տրամադրվել է մոտ 87.000 կտոր ուսումնական նյութ, որն համայնքներ առաքվել է փոստով կամ նրանց ներկայացուցիչների միջոցով: Նախարարության պատվերով հրատարակված գրքերի էլեկտրոնային տարբերակները տեղադրվել են նաև էլեկտրոնային գրադարանում:</p>
--	--	---

		<p>Բացի ուսումնական նյութերից՝ տարվա ընթացքում սփյուռքյան կառույցներին, հայաստանյան կազմակերպություններին ու անհատներին տրամադրվել են նախարարության պատվերով հրատարակված, նվիրաբերված և հավաքագրված գիտահանրամատչելի գրքեր, ձայնասկավառակ ու խտասալիկ, ՀՀ պետական խորհրդանշանների փաթեթներ, ամենատարբեր հրատարակչական նյութեր՝ մոտ 12.000 կտոր:</p> <p><b>7.</b> Սփյուռքի հայկական կառույցների ղեկավարների հետ համատեղ աշխատանքներում մեծ ուշադրություն է դարձվում և մշտապես աջակցություն ցուցաբերվում Սփյուռքում մեկօրյա դպրոցների ստեղծմանը: Հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է 16 նոր մեկօրյա դպրոց Ռուսաստանում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Ավստրիայում, Սերբիայում, ԱՄՆ-ում, Իսպանիայում և Իրաքում: Նորաստեղծ դպրոցներին տրամադրվում են դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, ուսումնաօժանդակ և դիդակտիկ նյութեր: 2017 թվականի նորաբաց մեկօրյա դպրոցների 7 ուսուցիչներ մասնակցել են «Սփյուռք» ամառային դպրոցի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին:</p> <p><b>8.</b> Սփյուռքի դպրոցների գործունեությանն աջակցության նպատակով իրականացվող «Քույր դպրոցներ» ծրագրի շրջանակներում 2009 թվականից սկսած համագործակցություն է հաստատվել 50 հայաստանյան և սփյուռքյան կրթօջախների միջև, ըստ որի պայմաններ են ստեղծվում ուսումնամեթոդական, կրթական-մշակութային, ուսուցիչների միջև փորձի փոխանակման, մայրենի լեզվի պահպանման և տարածման, երիտասարդ սերնդի հայեցի կրթության և դաստիարակության խնդիրների լուծմանն աջակցության համատեղ ծրագրերի, միջոցառումների իրականացման համար:</p>
--	--	--

		<p>Ծրագիրը շարունակվել է այս տարի համագործակցություն է հաստատվել հայաստանյան և սփյուռքյան 6-ական դպրոցների միջև:</p> <p><b>9.</b> Մայրենի լեզվի հեռավար ուսուցման ծրագրերում կարևորվում է ՀԲԸՄ վիրտուալ համալսարանի գործունեությունը՝ որպես օնլայն-հեռավար կրթության վերջին զարգացումները կրող լեզվուսուցման կայուն կենտրոն: Հեռավար այս համալսարանի միջոցով իրականացվում են հայերենի (արևելահայերեն և արևմտահայերեն) և մշակութային կրթության ուսումնական ծրագրեր՝ տարվա մեջ 4 ենթաշրջաններով: AVC վիրտուալ համալսարանի ուսուցման ենթաշրջանների մասին տեղեկատվություններն առաքվել են Սփյուռքի համայնքային, կրթամշակութային, երիտասարդական կազմակերպություններին, տեղադրվել ՀՀ սփյուռքի նախարարության կայքերում:</p> <p><b>10.</b> Սփյուռքահայ երիտասարդության շրջանում հայերենի իմացության մակարդակի բարձրացմանն էապես նպաստում են Հայերենի ուսուցման ժամանակակից հեռավար համացանցային ծրագրերը, ուստի կարևորվել է դրանց մասին հայկական համայնքներում տեղեկացվածության ապահովման խնդիրը: Դրանցից են՝ էլեկտրոնային գրադարանը - <a href="http://www.lib.mindiaspora.am">www.lib.mindiaspora.am</a> և «Արևելահայերեն-արևմտահայերեն և հակառակը» փոխվերժանող համացանցային ծրագիրը - <a href="http://www.translator.am">www.translator.am</a>:</p> <p>2017 թվականին <a href="http://libmindiaspora.am">libmindiaspora.am</a> գրադարանում թվայնացվել և տեղադրվել է ավելի քան 36 400 էջ նյութ, 124 ամբողջական գիրք, այդ թվում 2016 թվականին նախարարության պատվերով հրատարակված գրքերը:</p>
--	--	--

		<p>Շարունակվել են «Արևմտահայերենից արևելահայերեն և հակառակը» փոխվերժանող ծրագրի կատարելագործման ուղղությամբ աշխատանքները: Փոխարկիչի գիտելիքների բազան համալրվել է ավելի քան 2000 հասկացույթով, իսկ բառարաններում մուտքագրվել է մոտ 31.000 բառ 8 լեզվով:</p> <p><b>11.</b> Ամփոփվել են Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության հետ համատեղ իրականացվող «Հայապահպանության գործում նշանակալի ավանդի համար-2016» մրցանակաբաշխության արդյունքները: Մրցույթներին մասնակցել են 197 անհատ և կազմակերպություն՝ աշխարհի 24 երկրից, որից մրցանակների և խրախուսական դիպլոմի են արժանացել 177 անհատ և կազմակերպություն՝ մրցանակակիր է դարձել 68-ը, 109 անհատ և կազմակերպություն ստացել են խրախուսական դիպլոմներ:</p> <p>Հաստատվել են 2017թ. մրցանակաբաշխության անվանակարգերը և պայմանները՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• «Մայրենիի պաշտպան» (անհատներ),</li> <li>• «Լավագույն հայկական կրթօջախ»,</li> <li>• «Երիտասարդական կամ ուսանողական կազմակերպություն» անվանակարգերը,</li> <li>• «Ազատ Արցախ» մանկապատանեկան լավագույն ստեղծագործությունների մրցույթը (նկար, քանդակ (բնօրինակ, էսքիզ կամ լուսանկար), երգ, բանաստեղծություն, պատմվածք, շարադրություն, էսսե և այլն):</li> </ul> <p>Ստացվել են ավելի քան 160 անհատի և կազմակերպության հայտեր մոտ 20 երկրներից: Արդյունքները կամփոփվեն 2018 թվականի սկզբին:</p>
--	--	---

		<p><b>12.</b> ՀՀ ԳԱԱ ինստիտուտում ստեղծվել է 3 հանձնախումբ՝ արևմտահայերենի անադարտության, զարգացման, լեզվի 2 ճյուղի մերձեցման համար: Մշակվել է արևմտահայերենի պահպանման, անադարտության և զարգացման ռազմավարությունը:</p>
<p><b>122.</b> Հայաստանի Հանրապետության ներդրումային ծրագրերին սփյուռքահայերի մասնակցության ապահովման գործուն մեխանիզմների ներդրում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ՀՀ-ում գործող սփյուռքահայ գործարարների տվյալների շտեմարանի ստեղծում</li> <li>- Աջակցություն «Մեկ պատուհանի սկզբունքով» գործող կառույցի գործունեությանը՝ սփյուռքահայ հնարավոր ներդրողների վերաբերյալ տեղեկատվության տրամադրմամբ</li> <li>- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից համակարգվող բիզնես ծրագրերի մասին տեղեկատվության տրամադրում սփյուռքահայ ներդրողներին</li> <li>- Զբոսաշրջության զարգացման և ներդրումների ներգրավման ուղղությամբ Հայկական առևտրային ցանցի 5-րդ ժողովին և 3-րդ բիզնես ֆորումին սփյուռքահայ գործարարների և ներդրողների լայն մասնակցության ապահովում</li> </ul>	<p><b>1.</b> Նախարարությունում ստեղծվել է աշխատանքային խումբ սփյուռքահայերին խորհրդատվական ծառայություններ տրամադրելու, բիզնես ծրագրեր առաջարկելու, ներդրումների սահուն իրականացմանն օգնելու համար՝ «Մեկ պատուհան» կառուցակարգը:</p> <p><b>2.</b> ՀՀ ներդրումներին առնչվող օրենսդրության մասին համապարփակ բանկի ստեղծման նպատակով հավաքվել են համապատասխան նյութեր (հայերեն, անգլերեն, ռուսերեն): Սփյուռքահայ հնարավոր ներդրողների բանկի ստեղծման նպատակով հավաքվում են ՀՀ-ում գործող սփյուռքահայ բիզնեսմենների տվյալները:</p> <p><b>3.</b> ՀՀ սփյուռքի նախարարության պաշտոնական կայքում բացվել է «Ներդրումներ Հայաստանում» բաժին, որտեղ ներկայացված են Հայաստանում ներդրումների մասին, ինչպես նաև հարկային և մաքսային օրենսդրությունները, Հայաստանում ներդրումներին առնչվող արտոնությունները, ներդրումային քաղաքականությունն առնչվող նյութեր և բիզնես ծրագրեր: Բաժնում տեղադրվում են նաև ՀՀ տարբեր գերատեսչությունների կողմից ներկայացված ներդրումային ծրագրերը (հայերեն, անգլերեն, ռուսերեն): Արդեն տեղադրվել են 200-ից ավելի ներդրումային ծրագրեր: Բաժնում բացվել է «Սահմանապահ համայնքներ» ենթաբաժինը՝ ըստ մարզերի, և</p>

	<p>- Սփյուռքահայերի կողմից նոր ստեղծված ձեռնարկությունների գործունեության ընթացքի պարբերական մշտադիտարկում և ի հայտ եկած խնդիրների լուծմանն աջակցություն շահագրգիռ պետական կառավարման մարմինների հետ</p> <p>- Բիզնես ծրագրեր առաջարկելու, ներդրումների իրականացմանն աջակցություն ցուցաբերելու նպատակով սփյուռքյան համայնքներում աշխատանքային խմբերի ստեղծում</p> <p>- Տարածաշրջաններում ՀՀ տնտեսության մեջ սփյուռքահայերի ներդրումների լավագույն փորձի ներկայացում</p> <p>- Աջակցություն հայկական սփյուռքի ներուժի ներգրավման ընդլայնման հյուրանոցային և տուրիզմի ոլորտում</p> <p>- Համայնքային, համահայկական, հոգևոր կառույցների, կրթամշակութային, երիտասարդական կազմակերպությունների հետ տանել աշխատանքներ՝ զբոսաշրջության տարբեր ուղղություններով (ճանաչողական, էթնո, էկո, էքստրիմ տուրիզմ և այլն) ծրագրերի փաթեթներն</p>	<p>այնտեղ տեղադրվում են համայնքի վերաբերյալ համառոտ տեղեկատվություն, հիմնախնդիրները և մինչ օրս իրականացված աշխատանքները:</p> <p><b>4.</b> Փետրվարի 9-10-ը ՀՀ սփյուռքի նախարարությունը կազմակերպել է «Հայաստանում ներդրումներին՝ սփյուռքահայերի մասնակցությունը» և «Զբոսաշրջության զարգացումը Հայրենիքում և սփյուռքահայերի մասնակցությունը» կլոր սեղան քննարկումներ, որոնց մասնակցել են պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներ/ պատասխանատուներ, Հայաստանում ներդրումներ կատարած սփյուռքահայ գործարարներ, զբոսաշրջության ոլորտի ընկերություններ Սփյուռքից և Հայաստանից, ինչպես նաև վերոհիշյալ ոլորտների հետ առնչվող ՀԿ ներկայացուցիչներ՝ յուրաքանչյուր քննարկմանը շուրջ 50 մարդ:</p> <p><b>5.</b> Տարվել են աշխատանքներ տարբեր երկրներում գործող հայկական առևտրաարդյունաբերական պալատների հետ՝ ներդրումների ներգրավման ուղղությամբ: Սփյուռքի գործարարներին ու առևտրաարդյունաբերական պալատներին են ուղարկվել Հայաստանի համար մշակված բիզնես ծրագրերը, ինչպես նաև նրանց տեղեկացվել է Հայաստանում ներդրումներ իրականացնելու բոլոր հարթակների մասին (ընդհանուր առմամբ 1200 գործարար):</p> <p><b>6.</b> Ապրիլի 28-ին ՀՀ սփյուռքի նախարարությունում կայացել է «Սփյուռքի գորակցությամբ» խորագրով կլոր սեղան-քննարկում, որին մասնակցել են սփյուռքահայ հայտնի բարերարներ, գործարարներ և ներդրողներ:</p> <p><b>7.</b> Մայիսի 5-ին ՀՀ սփյուռքի նախարարությունը «Երևան Էքսպո»</p>
--	--	--

	<p>ու տեղեկատվությունը տեղերում տարածելու և գովազդելու ուղղությամբ</p> <p>- Ներդրումների «հաջողակ» պատմությունների մասին ֆիլմերի և հեռուստահաղորդումների նկարահանում և հեռարձակում արբանյակային հեռուստակայաններով</p>	<p>կենտրոնում կազմակերպել է Հայաստանում արդյունաբերության ոլորտում սփյուռքահայ ներդրողների արտադրանքների «Գործարար ու գորակցող Սփյուռք» խորագրով ցուցահանդես-վաճառքը, որի շրջանակներում իրենց արտադրանքներին են ներկայացրել սփյուռքահայերի կողմից հիմնված 23 ընկերություններ:</p> <p><b>8.</b> Հունիսի 28-ին ՀՀ սփյուռքի նախարարությունում տեղի է ունեցել տեսաժողով Հայկական առևտրային ցանցի (ATN), «Բելգիա-Հայաստան», «Պորտուգալիա-Հայաստան» առևտրային պալատների, ինչպես նաև կանադահայ, ամերիկահայ և ֆինլանդահայ գործարարների հետ, որի շրջանակներում քննարկվել են հարցեր՝ կապված Հայաստանի համար մշակված բիզնես ծրագրերի տարածման և ներդրումների ներգրավման ուղղությամբ:</p> <p><b>9.</b> Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողովի շրջանակներում սեպտեմբերի 19-ին տեղի է ունեցել Հայկական առևտրային ցանցի (ՀԱՅ) 3-րդ գործարար ֆորումը, իսկ սեպտեմբերի 20-ին՝ ՀԱՅ-ի 5-րդ ընդհանուր ժողովը: Միջոցառումներին մասնակցել է շուրջ 200 գործարար՝ Հայաստանից, Արցախից և Սփյուռքից, որոնց շրջանակներում քննարկվել են Հայաստանում ներդրումներ կատարելու հնարավորությունների, զբոսաշրջության զարգացման, նոր բիզնես գաղափարների իրագործման, ինչպես նաև ոլորտում առկա խնդիրների լուծման վերաբերյալ հարցեր:</p> <p><b>10.</b> ՀՀ սփյուռքի նախարարությունում կազմակերպվել են 30-ից ավելի հանդիպումներ սփյուռքահայ գործարարների հետ, որոնց ներկայացվել են Հայաստանի համար մշակված բիզնես ծրագրերը:</p>
--	--	--



		<p><b>11.</b> Դեկտեմբերի 1-ին Մարսելում կայացած Ֆրանս-հայկական առևտրի և արդյունաբերության պալատի հիմնադրման 25-ամյակի շրջանակներում տեղի է ունեցել հանդիպում ՀՀ սփյուռքի նախարարի և 200-ից ավելի հայազգի գործարարների միջև, որոնց, պալատի հետ համագործակցությամբ, տրամադրվել է Հայաստանի համար մշակված բիզնես ծրագրերը և ներդրումներին վերաբերող օրենսդրության մասին տեղեկություններ:</p> <p><b>12.</b> «Մփյուռքի ժամ» ծրագրի 5 հեռուստահաղորդումներով հեռարձակվել է Հայաստանի Հանրապետությունում իրականացվող ներդրումային ծրագրերի մասին և ՀՀ սփյուռքի նախարարության կատարած աշխատանքները այդ ուղղությամբ, «Մերոնք» և «Հայկական հետք» հեռուստահաղորդումներով հեռարձակվել շուրջ 20 հաղորդումներ՝ նվիրված Հայաստանում ներդրումներ իրականացրած սփյուռքահայ գործարարներին:</p> <p><b>13.</b> Հանրայնացվել են Հայաստանում 20-ից ավելի փոքր և միջին ձեռնարկատիրություններ ստեղծած սփյուռքահայերի հաջողության պատմությունները:</p>
<p><b>123.</b> Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը և դատապարտմանն ուղղված քաղաքականության շրջանակներում սփյուռքահայ երիտասարդության շրջանում պատմական</p>	<p>- «Հրանտ Դինք. 10 տարի անց» խորագրով կլոր սեղան-քննարկման անցկացում</p> <p>- «Ուրացման քաղաքականության արմատները, նորօրյա դրսևորումները և դրանց հետևանքները» գրքի հրատարակություն (200 օրինակ)</p> <p>- «Ցեղասպանության արտացոլումը պոլսահայ նորագույն գրականության</p>	<p><b>1.</b> Հունվարի 19-ին ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Հրանտ Դինք. 10 տարի անց» խորագրով կլոր սեղան-քննարկում, որին մասնակցում էին անվանի գիտնականներ, թուրքագետներ, քաղաքագետներ, պատմաբաններ, լրագրողներ, մտավորականներ: Բացման խոսքով հանդես է եկել ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը:</p> <p><b>2.</b> Հրատարակվել է «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը փաստաթղթերում և լուսանկարներում» պատկերագիրքը:</p>

<p>հիշողության ամրապնդմանն աջակցություն</p>	<p>մեջ» գրքի հրատարակություն (200 օրինակ)</p> <ul style="list-style-type: none"> <li>- Հայոց ցեղասպանությանը վերաբերող իրավական թղթածրարի կազմման աշխատանքներին աջակցություն</li> <li>- «Հայոց ցեղասպանության արտացոլումը 1915 թվականի մամուլի էջերում» (հայալեզու և օտարալեզու թերթերի նյութերի ժողովածու) երկհատոր աշխատության հրատարակություն (250 օրինակ)</li> <li>- ցեղասպանությունը վերապրածների, իրավահաջորդ սերունդների, ինչպես նաև նրանց նյութական, ֆինանսական, մշակութային կորուստների մասին տվյալների բազայի ձևավորում</li> <li>- «Հայոց ցեղասպանության արձագանքներն Իտալիայում. 1915» գրքի հրատարակություն (200 օրինակ)</li> <li>- «Ցեղասպանության չորրորդ սերնդի հիմնախնդիրները» խորագրով համաժողովի անցկացում</li> </ul>	<p>Պատկերագիրքը փաստաթղթերի և լուսանկարների միջոցով արտացոլում է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով Հայաստանում և Սփյուռքում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի, ՀՀ սփյուռքի նախարարության և 60-ից ավելի երկրներում ստեղծված տարածաշրջանային հանձնախմբերի կողմից իրականացված աշխատանքները:</p> <p><b>3.</b> ՀՀ սփյուռքի նախարարության պատվերով 2017 թվականի ընթացքում մի շարք գիտական հաստատությունների կողմից Հայոց ցեղասպանության հիմնախնդիրներին նվիրված իրականացվել են գիտահետազոտական աշխատանքներ, որոնք տպագրվել են:</p> <p><b>4.</b> Նախարարության պատվերով ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կողմից կազմվել և հրատարակվել է «Հայերեն-քրդերեն, քրդերեն-հայերեն» բառարանը:</p> <p><b>5.</b> Նախարարությունը աջակցել է հուլիսին «Վերադարձ» հիմնադրամի կազմակերպած «Նուբար» ազգագրական խմբի այցելությանը Արևմտյան Հայաստանի Կարս, Էրզրում, Խարբերդ, Քաղթա, Դիարբեքիր, Սիիր, Մուշ, Վան և Անի քաղաքներ, որտեղ ի թիվս մշակութային և համերգային միջոցառումների, տեղի է ունեցել նաև հանդիպում դավանափոխ հայության հետ:</p> <p><b>6.</b> Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողովի «Արտաքին քաղաքականության օրակարգի» թեմատիկ ուղղության շրջանակներում տեղի է ունեցել «Հայոց ցեղասպանության ճանաչում, ցեղասպանությունների կանխարգելում. քաղաքական և իրավական գործընթացները» նիստը, որին մասնակցել են անվանի գիտնականներ,</p>
---	--	---

		<p>վերլուծաբաններ, համահայկական կառույցների ներկայացուցիչներ Հայաստանից և Սփյուռքից:</p> <p>Նիստին զեկուցումներով են հանդես եկել ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Աշոտ Հովակիմյանը, Թուրքիայի Հանրապետության խորհրդարանի պատգամավոր Կարո Փայլանը, ՀՅԴ Բյուրոյի Հայ դատի և քաղաքական հարցերի գրասենյակի պատասխանատու Կիրո Մանոյանը, Ջորջան ինստիտուտի նախագահ Գրեգ Սարգսյանը (Կանադա), ՀՀ Սահմանադրական դատարանի խորհրդական, ի.գ.թ. Վլադիմիր Վարդանյանը ՌԱԿ կենտրոնական վարչության ատենապետ Սերխիո Նահապետյանը (Արգենտինա):</p> <p>7. Օժանդակություն է ցուցաբերվել Իսպանիայի 2 քաղաքներում և Արգենտինայում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված խաչքարների տեղադրմանը:</p>
<p><b>124.</b> «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժման ձևավորում և զարգացում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Շարժման մասին տեղեկատվության տարածում և քարոզում Սփյուռքում</li> <li>- Առաջարկել Համահայկական աշխարհագրական ասոցիացիային իր «Սփյուռքի ժամ» և «Արմնյուզ» ՀՀ «Աշխարհասփյուռ» հաղորդումներում բացելու առանձին էջ՝ «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» խորագրով և ներկայացնել սփյուռքահայ աջակիցներին</li> <li>- «Արցախի հոգևոր գանձերը» գրքի ձեռքբերում և տրամադրում հայկական խոշոր համայնքային կառույցներին</li> </ul>	<p>2016 թվականի հոկտեմբերի 20-24-ը Հայաստանում և Արցախում կայացած Լրագրողների համահայկական 8-րդ համաժողովի մասնակիցների առաջարկով սկսվել է «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» համահայկական շարժումը:</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Սփյուռքյան լրատվամիջոցներում և նախարարության կայքերում հրապարակվել է ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի կոչը:</li> <li>2. Պատրաստվել է շարժման խորհրդանիշը՝ Արցախի «Մենք ենք, մեր սարերը» հուշարձանի պատկերով, շարժման վերաբերյալ տարածվել է տեղեկատվություն:</li> <li>3. Նախարարության «Հայերն այսօր» (hayernaysor.am) էլեկտրոնային պարբերականում բացվել է «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» խորագիր, որտեղ տեղադրվում է շարժման</li> </ol>

	<p>- Մփյուռքյան խմբերի և անհատ կատարողների մասնակցությամբ մշակութային խմբերի ելույթների կազմակերպում Արցախում,</p> <p>- Արցախում զբոսաշրջության, ներդրումների և անշարժ գույքի ձեռքբերման քարոզչություն</p> <p>- Հասարակական կազմակերպությունների հետ համատեղ սփյուռքահայ երիտասարդների այցելությունների կազմակերպում Արցախ կամավորական աշխատանքներ իրականացնելու նպատակով (շինարարական, մանկավարժական և այլն)</p> <p>- Տարածաշրջանների կրթամշակութային կենտրոններում և համայնքային կառույցներում մայիսի 9-ին կազմակերպել Շուշիի ազատագրման օրվան նվիրված միջոցառումներ</p> <p>- «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» ֆլեշ մոբերի կազմակերպում Մփյուռքի խոշոր հայկական համայնքներում՝ դպրոցների աշակերտների, ուսանողների, երիտասարդների մասնակցությամբ</p>	<p>շրջանակներում իրականացված միջոցառումների մասին տեղեկատվություն:</p> <p>4. Ֆեյսբուք սոցիալական ցանցում ստեղծվել է էջ՝ «What Are You Doing For Artsakh?» վերտառությամբ, որտեղ տեղադրվում են շարժման շրջանակներում տեղի ունեցող միջոցառումների վերաբերյալ տեղեկություններ (արդեն տեղադրված է 130-ից ավելի նյութ):</p> <p>5. Մփյուռքյան շուրջ 40 լրատվամիջոցների առաջին էջերում բացվել են բաժիններ՝ շարժման խորհրդանիշով:</p> <p><b>Արդյունքում՝</b></p> <p>- Ուսումնասիրելով 2016 թվականի ընթացքում Մփյուռքի արձագանքները շարժմանը՝ Մփյուռքի նախարարությունը 2017 թվականը հռչակվել է «Արցախի տարի»: «Արցախի տարի» շարժման արդյունքում Մփյուռքում կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ:</p> <p>- Մփյուռքի առաջատար լրատվամիջոցների խմբագիրներն ու լրագրողները հանդես են եկել շարժմանը սատարելու հրապարակումներով, ելույթներ ունեցել տեղական լրատվամիջոցներով:</p> <p>- Շարժմանն արդեն միացել են սփյուռքի բազմաթիվ համայնքային կառույցներ, դպրոցներ, մշակութային խմբեր և անհատներ՝ իրականացնելով տարաբնույթ միջոցառումներ:</p> <p>- Շարժմանը դրական ազդակներ հաղորդող առաջին քայլերը Մփյուռքի դպրոցականների լուսանկարներն են՝ շարժման պաստառներով, որոնք տեղադրվում են նախարարության կայքերում և տարածվում սոցիալական ցանցերում: Չափազանց տպավորիչ են հատկապես երեխաների նախաձեռնությունները, Արցախի իրենց հասակակիցներին սատարելու նրանց</p>
--	---	---

	<ul style="list-style-type: none"> <li>- Արցախյան օրերի անցկացում Մփյուռքի համայնքներում</li> <li>- Նախարարության «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականում ներկայացնել Արցախում ներդրումներ իրականացնող սփյուռքահայ գործարարներին, նրանց հաջողության պատմությունները, փորձը</li> <li>- Նախարարության «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականում մշտական անդրադարձ կատարել Արցախի մշակութային կյանքին</li> </ul>	<p>գործնական քայլերը:</p> <p>Առանձնանում են ներքոհիշյալ գործերը՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- Ֆրանսիահայ հայրենադարձ Սիրան Միսակյան-Բասմաջյանը իր թոշակով պարբերաբար ծանրոցներ ուղարկում զինվորներին,</li> <li>- Լիբանանի Կաթողիկե եկեղեցու Սուրբ Խաչ Հարպոյան վարժարանը ծրագրի խորհրդանիշով 2017 թվականի օրացույց է հրատարակել: «Քույր դպրոցներ» ծրագրով համագորակցություն է հաստատվել Սուրբ Խաչ Հարպոյան և Մարտակերտի թիվ 2 դպրոցների միջև: Ապրիլին Արցախի Մարտակերտի շրջանի թիվ 2 հիմնական դպրոցի ուսուցիչները «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժման շրջանակներում վերապատրաստվել են Բեյրութի Սուրբ Խաչ Հարպոյան վարժարանում:</li> <li>- Երևանի «Հայ-ամերիկյան առողջության կենտրոնը» 4 օր Արցախում անվճար հետազոտություններ է իրականացրել,</li> <li>- Գերմանիայի Բադեն Վյուրթենբերգ երկրամասի հայ համայնքի հոգևոր հովիվ Տեր Տիրատուր քահանա Մարդարյանը Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առիթով համայնքի կողմից Արցախի անապահով ընտանիքներին օգնություն է բերել՝ 26 տոննա սնունդ և հագուստ: Օգնությունը շարունակական է լինելու:</li> <li>- Լիբանանի «Զարթոնք» օրաթերթի խմբագրակազմը միացել է շարժմանը և հրատարակել է Արցախին նվիրված ամանորյա Բացառիկ համար: Վաճառքից գոյացած հասույթով Հայոց բանակի զինվորների համար գնվել է ձմեռային տաք հագուստ, որը Մփյուռքի նախարարության միջոցով փոխանցվել է ՀՀ պաշտպանության նախարարությանը:</li> <li>- Քուվեյթի ազգային վարժարանը գրենական պիտույքներ է առաքել Արցախ: Աշխատանքները լինելու են շարունակական:</li> </ul>
--	---	---

		<ul style="list-style-type: none"> <li>- Արգենտինահայ ճանաչված լրագրող Կլաուս Լանխե Հազարյանը միացել է շարժմանը և Արցախի մասին իսպաներեն տարաբնույթ տեղեկատվություն է տարածում, իր ստեղծած <a href="http://www.soyarmenio.com.ar">www.soyarmenio.com.ar</a> («Ես հայ եմ») կայքում բացել է «Արցախ» բաժինը: Ապրիլին նա այցելել է Հայաստան և Արցախ՝ տեղի հանրությունից հարցազրույցներ վերցնելու նպատակով:</li> <li>- Մայիսի 1-ին Շվեյցարիայի Աեշ գյուղաքաղաքի ավստրիացի փիլիսոփա Ռուդոլֆ Շտայների անվան դպրոցում կայացած «Հայկական մշակույթի օր» խորագրով ամենամյա միջոցառմանը ներկայացվել է «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժման վերաբերյալ տեղեկատվությունը:</li> <li>- Բարսելոնայի հայկական մշակութային միության անդամները, մեկօրյա դպրոցի աշակերտները և «Հայրողիք» պարաօմբի սաները միացել են շարժմանը, Միության անդամները ՀԲԸՄ միջոցով նյութական օժանդակություն են ցուցաբերել, Բարսելոնայում կազմակերպել են գորակցության հավաքներ:</li> <li>- Շառլ Ազնավուրը ողջունել է «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժումը Շանսոնյեն, ծանոթանալով շարժման առաքելությանը և գաղափարին, այն ողջունելի քայլ է որակել՝ ընդգծելով. «Շնորհավորում եմ, որ Արցախին օգնելու համար այսպիսի շարժում է սկսվել, նմանօրինակ նախաձեռնությունները պետք է շատ լինեն»:</li> <li>- ՀԲԸՄ-ի Արգենտինայի մասնաճյուղը միացել է «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» համահայկական շարժմանը: Շարժման շրջանակներում Արգենտինայի մի շարք քաղաքներում տեղի են ունեցել համերգներ: Երաժշտական կատարումներով հանդես են եկել «YANNI» նվագախմբի ջութակահար Սամվել Երվինյանը, արգենտինաբնակ երաժիշտ, ՀԲԸՄ-ի Արգենտինայի մասնաճյուղի պատվավոր անդամ Գագիկ Գասպարյանը, դաշնակահար Արմեն Կուզիկյանը, իսկ</li> </ul>
--	--	---

		<p>Կորդորայում՝ հայկական պարերի կատարումներով նրանց է միացել «Արարատ» պարախումբը: Սեպտեմբերի 22-ին ՀՀ սփյուռքի նախարարության և Արգենտինայի ՀԲԸՄ-ի նախաձեռնությամբ Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի է ունեցել համերգ, որի ընթացքում ամփոփվել է շարժման շրջանակներում Արգենտինայում կայացած 10 համերգների արդյունքները: Համերգաշարի ընթացքում հանգանակված գումարով գնվել է 300 երաժշտական գործիք, որից 150-ը սեպտեմբերի 26-ին տրամադրվել է Արցախի երաժշտական դպրոցներին, իսկ մնացած 150-ը տրամադրվել է Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների երաժշտական դպրոցներին:</p> <ul style="list-style-type: none"> <li>- «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» համահայկական շարժման շրջանակներում ՀԲԸՄ-ի Բուենոս Այրեսի մասնաճյուղը Քաշաթաղի շրջանի Իշխանաձոր համայնքի Հովհաննես Թումանյանի անվան միջնակարգ դպրոցին նվիրել է դաշնամուր:</li> <li>- Հայոց բանակի 25-ամյակի կապակցությամբ, արձագանքելով ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի կոչին, աշխարհի շուրջ 45 երկրներից ստացվել է ավելի քան 60 տեսաուղերձներ և շուրջ 600 նամակներ՝ ուղղված Պաշտպանության բանակին և հայ զինվորին: Դրանք տպագրվել են «Հայերն այսօր» և «Հայ զինվոր» պարբերականներում, ապա առաքվել են գորամասեր: Դրանք մեծ ոգևորություն են առաջացրել զինվորների շրջանում:</li> <li>- Գերմանահայ գործարար Մուրադ Աքյուզն առաջիկայում բարեգործական ծրագրեր կիրականացնի Արցախում:</li> <li>- Հորդանանի «Վարդավառ» հայկական երգչախումբը միացել է շարժմանը, որի շրջանակում բարեգործական համերգով հանդես է եկել Երևանում:</li> <li>- Էստոնիայի հայ համայնքը, արձագանքելով շարժմանը,</li> </ul>
--	--	--

		<p>արցախցի գոհված 4 զինվորականների ընտանիքներին է փոխանցում ամսական 200 եվրո:</p> <ul style="list-style-type: none"> <li>- Լիբանանի Հայ Ավետարանական Կրթական Համադրող հանձնախումբը, ընդառաջելով ՀՀ սփյուռքի նախարարության «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» կոչին, պատրաստել «Արցախ, Մեր Հպարտություն Ես» խորագրով ձայնասկավառակ, որտեղ ներառվել են Արցախին նվիրված 14 երգեր: Ձայնասկավառակի վաճառքից գոյացած հասույթը տրամադրվելու է Հայ Ավետարանչական Ընկերակցության Արցախի «Շող» ծրագրին, որի նպատակն է բարելավել Շուշի մանուկների սոցիալական կյանքը:</li> <li>- Միանալով «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» համահայկական շարժմանը՝ Բեյրութի «Վահան Թեքեյան» միջնակարգ վարժարանում կազմակերպվել է «Ազատ Արցախը սպասում է մեզ» խորագրով մշակութային միջոցառում:</li> <li>- Ռուսաստանի Կամչատկայի հայ համայնքը 1 ԼԱԶ մակնիշի ավտոբուս է նվիրել Արցախի պաշտպանության բանակին:</li> <li>- Նոյեմբերի 24-ին շարժման շրջանակներում Արամ Խաչատրյան համերգասրահում կայացել է արցախյան պատերազմի զոհերին և նրանց ծնողներին նվիրված «Կարոտի կանչով հերոսներիս հետ» խորագրով համերգ, որը կազմակերպվել է ԱՄՆ Լոս Անջելեսի քաղաքում գործող «Կանթեղ» և «Տարոն» աշուղական երգչախմբերի գեղարվեստական ղեկավար, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Գևորգ Զաքմանյանի նախաձեռնությամբ:</li> <li>- Գերմանիայի Մյունխեն քաղաքի Հայ հայրենակցական միության «Անուշ» պարախումբը 2017 թվականի մշակութային ամբողջ գործունեությունը նվիրել է «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժմանը հանրահռչակմանը: Ամփոփելով շարժման շրջանակներում իրենց կատարած աշխատանքերը՝ պարախումբի</li> </ul>
--	--	--



		<p>անդամները Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ Ստեփանակերտի և Բերձորի գիշերօթիկ դպրոցի աշակերտներին Մյունխենից ուղարկել են քաղցրացվենիքի տուփեր:</p> <p>- Դեկտեմբերի 1-3-ը Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Շահե եպիսկոպոս Փանոսյանի հովանավորությամբ, Մարաշի հայրենակցական միության նախագահությամբ Լիբանանի «Արցախի ֆոնդ»-ը «Ազդակ»-ի «Փյունիկ» սրահում կազմակերպել է Արցախյան տոնավաճառ՝ արցախյան արտադրանքների և ձեռագործ աշխատանքների ցուցահանդես-վաճառք</p> <p>6. Հոկտեմբերին Բելգիայում կայացած Եվրոպայի հայերի 4-րդ համագումարի շրջանակներում կայացել է «Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի հետապնդումը Եվրոպայում» թեմայով կլոր-սեղան քննարկում: Համագումարի բացմանը՝ հոկտեմբերի 18-ին, ելույթ է ունեցել Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը:</p> <p>7. Ֆրանսիայի հայ համայնքի աջակցությամբ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կայացել է «Ֆրանսիայում Արցախի օրեր» փառատոնը: Միջոցառումների ընթացքում ներկայացվել է Արցախի մշակույթն ու կենցաղը, ցուցադրվել են վավերագրական ֆիլմեր: Նոյեմբերի 21-ին՝ փառատոնի մեկնարկին, մասնակցել է Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը: Փառատոնը անցկացվել է Ֆրանսիայի մի շարք հայաշատ քաղաքներում:</p> <p>8. «Մփյուռքի ժամ» և «Աշխարհասփյուռ» հեռուստահաղորդաշարերը առանձին հաղորդումներով անդրադարձել են շարժման շրջանակներում իրականացված բարեգործական միջոցառումներին:</p>
--	--	--

		<p>9. ՀՀ Արագածոտնի մարզերը Կարբի և Օհանավան համայնքները շարժման շրջանակներում աջակցել են Արցախի պաշտպանության բանակին՝ տրամադրելով մրգեր:</p> <p>10. «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականի թղթակիցները սփյուռքահայերի հետ հարցազրույցների ժամանակ անդրադառնում են շարժման վերաբերյալ նրանց տեսակետին և շարժման շրջանակներում նրանց կատարած աշխատանքներին:</p> <p>Շարժումը լայնորեն տարածվել է Ռուսաստանում, Եվրոպայի մի շարք երկրներում, ԱՄՆ-ում, Լիբանանում, Լատինական Ամերիկայում, անգամ Սիրիայում:</p>
<p><b>125.</b> Սփյուռքում ըստ մասնագիտությունների համահայկական ցանցերի ընդլայնում և մասնագիտական ներուժի օգտագործում՝ ՀՀ-ի և Արցախի տնտեսության զարգացման համար</p>	<ul style="list-style-type: none"> <li>- սփյուռքի հայկական զանգվածային լրատվության միջոցների և լրագրողների վերապատրաստում</li> <li>- Հայաստան-սփյուռք 6-րդ համահայկական համաժողովի կազմակերպում և անցկացում</li> <li>- աջակցություն սրտաբանների Եվրակովկասյան 6-րդ համահայկական համաժողովի կազմակերպմանը</li> <li>- սփյուռքում երիտասարդական, կանանց, մշակութային, մասնագիտական նոր միությունների ստեղծման խթանում և նորաստեղծ կառույցներին աջակցության ցուցաբերում</li> <li>- մասնագիտական կարողություններն</li> </ul>	<p>1. ՀՀ սփյուռքի նախարարության «Սփյուռք» ամսառային դպրոց» ծրագրի 5 ուղղություններից մեկը Լրագրողների վերապատրաստման դասընթացներն են, որոնք անցկացվել են հուլիսի 2-15-ը Երևանի պետական համալսարանում:</p> <p>Լրագրողների վերապատրաստման դասընթացներին մասնակցել է 17 հոգի 8 երկրից (Ռուսաստան - 4, Ավստրիա - 1, Վրաստան - 4, Լիբանան - 1, Ուկրաինա - 4, Ֆրանսիա - 1, Արգենտինա - 1, Սիրիա - 1):</p> <p>2. Մայիսյան հաղթական հերոսամարտերի և Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակման 100-ամյակի նախաշեմին 2017թ. սեպտեմբերի 18-20-ին Երևանում՝ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, անցկացվել է «Փոխադարձ վստահություն, միասնականություն և պատասխանատվություն» խորագրով Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողովը:</p> <p>Համաժողովը ՀՀ Նախագահի բարձր հովանու ներքո</p>

	<p>ու կապերը հայրենիքին ծառայեցնելու նպատակով համահայկական մասնագիտական ցանցերի ձևավորում և համատեղ նախագծերի իրագործում, աջակցություն ավելի մեծ թվով համայնքներում մասնագիտական ընկերակցությունների ստեղծման աշխատանքներին</p> <p>- աշխատանքներ լրատվամիջոցների համահայկական ընկերակցության հետ, համակարգող մարմնի աշխատանքների կազմակերպում</p>	<p>կազմակերպվել է ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների, արտաքին գործերի և պաշտպանության նախարարությունների հետ համագործակցությամբ:</p> <p>ՀՀ Նախագահի նստավայրում Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովի ընթացքի քննարկման նպատակով կազմակերպվել են մի շարք հանդիպումներ, որից 2-ը ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորությամբ, մյուսները՝ աշխատակազմի ղեկավար Արմեն Գևորգյանի:</p> <p>Համաժողովի կազմակերպական աշխատանքների համակարգման նպատակով ընդունվել է ՀՀ վարչապետի «Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողովը Հայաստանի Հանրապետությունում անցկացնելու մասին» 2017 թվականի հունիսի 20-ի N 592-Ա որոշումը:</p> <p>Համաժողովին բացման խոսքով ելույթ է ունեցել ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, այնուհետև հնչել է Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության խոսքը, ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը, ԱՀ Նախագահ Բակո Սահակյանի ելույթը, իսկ վերջում՝ Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի օրհնության խոսքը:</p> <p>Համաժողովը անցկացվել 4 ուղղություններով՝ 16 նիստերի և 3 լիազումար նիստերի միջոցով: 4 թեմատիկ ուղղություններն են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• Հայաստանի զարգացման հիմնախնդիրներ</li> <li>• ՀՀ պաշտպանական քաղաքականության առանձնահատկությունները ժամանակակից մարտահրավերների պայմաններում</li> <li>• Արտաքին քաղաքականության օրակարգ</li> <li>• Հայապահպանության հիմնախնդիրներ:</li> </ul>
--	---	---

		<p>Համաժողովի 2-րդ լիազումար նիստում ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը ելույթ է ունեցել «ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության հիմնադրույթները» թեմայով՝ ներկայացնելով Հայաստանի տնտեսության զարգացման ներկա ռազմավարությունը, բարեփոխումների ուղղությունները, այնուհետև ելույթ են ունեցել «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրեն Ալեքսանդր Խաչատրյանը և Հայաստանի զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Արմեն Ավակ Ավակյանը:</p> <p>Համաժողովի ընթացքում տեղի է ունեցել 3 կլոր-սեղան քննարկում՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• Համահայկական խորհրդի ձևավորումը</li> <li>• Մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի Առաջին Հանրապետության 100-ամյակի տոնակատարությունների նախնական ծրագրի ներկայացում</li> <li>• Երևանի 2800-ամյակի տոնակատարությունների նախնական ծրագրի ներկայացում:</li> </ul> <p>Համաժողովի փակման լիազումար նիստում ելույթ է ունեցել ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Արա Բաբլոյանը, այնուհետև թեմատիկ ուղղությունների պատասխանատու գերատեսչությունների ղեկավարները/կամ նրանց ներկայացուցիչները ամփոփել են համաժողովի՝ իրենց պատասխանատվության ներքո գտնվող ուղղությունների արդյունքները:</p> <p>Համաժողովի ավարտին ընդունվել է հայտարարություն, որտեղ նշվել են Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման</p>
--	--	--

		<p>հիմնական ուղղությունները և ուղենշվել հետագա անելիքները:</p> <p>Համաժողովի օրերին իրականացվել են նաև մի շարք մշակութային միջոցառումներ, մասնավորապես՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• Համերգ՝ նվիրված Արաքս Մանսուրյանի ստեղծագործական գործունեության 50-ամյակին</li> <li>• Համերգ՝ նվիրված «Ծագումով հայեր» հաղորդաշարի 10-ամյակին</li> <li>• «Նաիրի» համահայկական երաժշտական փառատոնի մրցանակաբաշխություն-շքահանդես:</li> </ul> <p>Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողովին մասնակցել է 1837 հոգի 71 երկրից, ընդ որում՝ 1363-ը՝ Սփյուռքից:</p> <p>Համաժողովին հիմնական զեկույցով հանդես է եկել <b>106</b> հոգի <b>17</b> երկրից, ընդ որում՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• Լիագումար նիստեր - <b>14</b> հոգի</li> <li>• Հայաստանի զարգացման հիմնախնդիրներ - <b>20</b> հոգի</li> <li>• ՀՀ պաշտպանական քաղաքականության առանձնահատկությունները ժամանակակից մարտահրավերների պայմաններում - <b>28</b> հոգի</li> <li>• Արտաքին քաղաքականության օրակարգ - <b>17</b> հոգի</li> <li>• Հայապահպանության հիմնախնդիրներ - <b>27</b> հոգի:</li> </ul> <p>Համաժողովին հարակից ելույթներով և հարցադրումներով հանդես է եկել 168 հոգի 26 երկրից:</p> <p>Գործարկվել է համաժողովի կայքը՝ paf2017.am, որտեղ տեղադրվել են համաժողովի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, ծրագիրը և այլ նյութեր:</p> <p>Պատրաստվել է Հայաստան-Սփյուռք 5-րդ համաժողովի</p>
--	--	--

		<p>հարցադրումների վերաբերյալ տեղեկատվական փաթեթը՝ 6-րդ համաժողովի մասնակիցներին տրամադրելու համար:</p> <p>Համաժողովի անցկացման վայրում գործել է մամուլի կենտրոն, որտեղ հարցազրույցներով և ելույթներով հանդես են եկել 10-յակ մարդիկ: Համաժողովի լուսաբանման համար հավատարմագրվել է 55 լրատվամիջոցի շուրջ 200 ներկայացուցիչներ: Համաժողովի մասնակցել են նաև Սփյուռքի հայկական ավելի քան 50 հայկական լրատվամիջոցի 90 լրագրող:</p> <p>Հավաքվել են համաժողովին հնչած բոլոր զեկույցների և ելույթների էլեկտրոնային տարբերակները: Նամակներ են ուղարկվել բոլոր նրանց, ովքեր հնարավորություն չեն ունեցել ելույթով հանդես գալու, ուղարկելու իրենց ելույթները կամ հարցադրումները:</p> <p>Համաժողովում հնչած կամ հետո ներկայացված բոլոր հարցադրումները վեր են հանվել, դաս-դասվել են ըստ ուղղությունների, պատրաստվել է ամփոփ փաստաթուղթ, այն ուղարկվել է ՀՀ վարչապետին, որպեսզի հանձնարարվի յուրաքանչյուր գերատեսչությանը՝ իր ուղղությամբ համապատասխան աշխատանքներ իրականացնելու համար:</p> <p>Համաժողովի հիմնական արդյունքներն ըստ թեմատիկ ուղղությունների՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• <b>Արտաքին և ռազմաքաղաքական տեսանկյուն</b></li> </ul> <p>ա) Վերահաստատվել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդունված Համահայկական Հռչակագրի պատմական նշանակությունն ու առաքելությունը ցեղասպանության ճանաչման, դատապարտման ու հատուցման</p>
--	--	--

		<p>հետագա գործընթացի շարունակականության իմաստով, որպես ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը:</p> <p>բ) Վերահաստատվել է Սփյուռքի քաղաքական ու տնտեսական կարևոր մասնակցությունը (այդ թվում՝ լոբբիստական աշխատանքները) Արցախի հանրապետության զարգացմանը, նրա միջազգային ճանաչմանն ու առկա մարտահրավերների հաղթահարմանը, որոնք առանձնակի սրվել են 2016 թ. ապրիլյան առճակատումից հետո:</p> <p>գ) Սիրիական հակամարտության հետևանքով ՀՀ-ում վերաբնակված սիրիահայության օժանդակության շարունակական ծրագրերի իրականացում, արդյունավետության բարձրացման հետևողական ջանքերի կիրառում, սիրիական հակամարտության վերաբերյալ ՀՀ դիրքորոշման վերահաստատում և հետպատերազմյան Սիրիայի վերականգնմանը ՀՀ գործուն մասնակցության հավաստում:</p> <p>դ) «Ազգ-բանակ» հայեցակարգի համահայկական ձևաչափի, ինչպես նաև ՀՀ պաշտպանական քաղաքականության առանձնահատկությունների ներկայացում և քննարկում առկա տարածա-շրջանային մարտահրավերների պայմաններում ու համազգային արձագանքման, դերա-բաժանման ապահովում:</p> <p>ե) Արտակարգ իրավիճակներում, հակահայկական քարոզչության պայմաններում ՀՀ-Սփյուռք միասնական փոխգործակցության մեխանիզմների ապահովման ուղղությամբ քննարկումների ծավալում, առաջադրանքների կազմում և ներկայացում:</p>
--	--	---

		<p>զ) Համագգային քաղաքական նշանակություն ունեցող Համահայկական Խորհրդի ձևավորման գործնական քայլերի ձեռնարկում:</p> <p>է) ՀՀ նախագահ Ս. Սարգսյանն Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովի բացման խոսքում և ՀՀ անկախության 26-րդ ամյակի կապակցության ՊՆ համալիրում Սփյուռքի ու ՀՀ ներկայա-ցուցիչների հետ հանդիպմանը ներկայացրեց ՀՀ առաջիկա տարիների և հաջորդ Համաժողովի գլխավոր աշխատանքային ուղղությունն ու քաղաքականությունը՝ հայրենադարձության գործընթացի ակտիվացում /մեկնարկ/՝ 2040 թ. ՀՀ բնակչությունը 4 մլն-ի հասցնելու նպատակով:</p> <p style="text-align: center;"><b>• Տնտեսական բաղադրիչ</b></p> <p>ա) Վերահաստատվել է ՀՀ - Սփյուռք տնտեսական գործակցության հայանպաստ նշանակությունը, ներդրումային նոր ծրագրերի անհրաժեշտությունը, փոխադարձ հետաքրքրությունը և առաջնահերթ ոլորտները (տեխնոլոգիական, պաշտպանական և այլն), ընթացակարգերի հնարավորինս պարզեցումը: Ներկայացվել են հաջողված տնտեսական ձեռնարկները, հայկական առևտրային ցանցի և գործարար աշխարհի ներուժի ընդլայնման հրամայականները:</p> <p>բ) Սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացման, վերականգնողական ու անվտանգային մեխանիզմների քննարկում, իրականացված ու նախատեսվող ծրագրերի ներկայացում:</p> <p>գ) Համաժողովի մասնակից գործարար հատվածի կողմից հետաքրքրություններ են դրսևորվել մի շարք ոլորտներում ներդրումների կատարելու առնչությամբ, ներկայացվել են 100-ից ավելի առաջարկ-փաթեթներ, որոնք պետական</p>
--	--	---



		<p>համապատասխան գերատեսչությունների կողմից կուսումնասիրվեն և ընթացք կստանան: Համաժողովին մասնակցել է Սփյուռքից ժամանած շուրջ 250 գործարար:</p> <ul style="list-style-type: none"> <li>• <b>Հայապահպանություն</b></li> </ul> <p>ա) Համաժողովում ընդգծվեց արևելահայերենի ու արևմտահայերենի մերձեցման անհրաժեշտությունը, որի ուղղությամբ աշխատանքային հանձնարարականներն առկա են:</p> <p>բ) Նոր մոդելի կրթական համակարգի, էլեկտրոնային շտեմարանների, համակարգչային դասընթացների, հեռավար ուսուցման ու համացանցի ներգրավմամբ կրթության անցման նպատակահարմարություն, գործող օրինակների փորձի համալիր ներդրում:</p> <p>գ) Սփյուռքի հայկական եկեղեցական կառույցների ակտիվ ներգրավվածությունը իր կարևոր նպաստն է բերում աշխարհասփյուռ հայի ինքնության պահպանմանն՝ անկախ դավանանքի առաքելական, կաթոլիկ կամ ավետարանական ուղղվածությունից:</p> <p>դ) Սփյուռքի պատմամշակութային ժառանգությունը, վտանգված հուշարձանները պահպանելն ու ներկայացնելը, երիտասարդության նոր սերնդի՝ համայնքային կառույցներին աստիճանական ներգրավվելու գործընթացը:</p> <p>Համաժողովի հիմնական ձեռքբերումները՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• Համաժողովին Սփյուռքից մասնակցել է շուրջ 1400 հոգի 69 երկրից:</li> <li>• Համահայկական խորհրդի ստեղծման և Հայաստան-Սփյուռք գործակցության հետագա զարգացման</li> </ul>
--	--	--

		<p>հարցերով աշխատանքային խմբի խորհրդակցության անցկացումը:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Համաժողովի վերաբերյալ Սփյուռքում կազմակերպվել են մի շարք հավաք-հանդիպումներ, քննարկումներ (ԱՄՆ, Լիբանան, Հայաստան և այլն):</li> <li>• Համաժողովը լուրջ հարթակ հանդիսացավ ոչ միայն Հայաստան-Սփյուռք, այլև Սփյուռք-Սփյուռք միջհամայնքային գործակցության զարգացման և ամրապնդման համար: Ձևավորվեցին հորիզոնական և ուղղահայաց նոր կապեր:</li> <li>• Համաժողովը առաջին անգամ անցկացվել է գրեթե բոլոր գերատեսչությունների հետ համագործակցությամբ:</li> <li>• Համաժողովի օրերին կազմակերպական աշխատանքներին առաջին ներագրավվեցին ավելի քան 50 կամավորներ՝ հայաստանյան տարբեր բուհերից</li> <li>• Համաժողովի լուսաբանման համար հավատարմագրվել է 30 օտարերկրյա լրատվամիջոցներ</li> <li>• Համաժողովին առաջին անգամ մասնակցել են 16 երկրներից՝ Ալբանիա, Էստոնիա, Թաիլանդ, Իռլանդիա, Մալայզիա, Մակեդոնիա, Մարոկկո, Ճապոնիա, Մեքսիկա, Մյանմար, Մոլդովա, Նոր Զելանդիա, Չինաստան, Պորտուգալիա, Սինգապուր, Մուդան:</li> </ul> <p><b>3.</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը ՀՀ առողջապահության նախարարության և «Ակցիա Առողջություն Հայաստան-Ֆրանսիա» կազմակերպության հետ համատեղ արդեն կազմակերպել է Սրտաբանության Եվրակովկասյան 5 համաժողովներ՝ 2007-2015 թվականներին:</p> <p>Համաժողովի նպատակն է հայտնաբերել և համախմբել աշխարհի հայ սրտաբանների ներուժը՝ հայ ժողովրդի</p>
--	--	--

		<p>առողջության պահպանման և Հայաստանում բժշկագիտության զարգացման համար, նպաստել Հայաստանի և Միջուռքի սրտաբանների համագործակցությանը, մասնագիտական որակների բարձրացմանն ու կատարելագործմանը, նորարարական փորձի փոխանակմանը, ինչպես նաև նոր որակ հաղորդել սրտաբանների հետագա համագործակցությանը: Սրտաբանության Եվրակովկասյան 6-րդ համաժողովը տեղի է ունեցել հոտեմբերի 13-14-ը Երևանում:</p> <p><b>4.</b> ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ և աջակցությամբ Ճարտարապետների և ճարտարագետների համահայկական ընկերակցությունը (ՃՃՀԱ) ստեղծվել է 2009 թվականին:</p> <p><b>4.1.</b> ՃՃՀԱ-ն ներկայումս 12 երկրում ունի ներկայացուցչություններ: Հայկական սփյուռքում դրանք ընդլայնելու նպատակով տարվում են համապատասխան աշխատանքներ:</p> <p><b>4.2.</b> Ընկերակցությունը մշակել է 8 կետից բաղկացած գործողությունների փաթեթ: Այն հիմնված է ՃՃՀԱ 5 հիմնադրամների վրա, որոնց մասին հայտարարվել է 2015 թվականին կայացած Ճարտարապետների 3-րդ համահայկական համաժողովի ժամանակ, որպես ՃՃՀԱ գործունեության ուղեցույց: Փաթեթը ՀՀ սփյուռքի նախարարության աջակցությամբ ուղարկվել է ավելի քան 50 երկրներում գործող ՀՀ դեսպանություններ՝ նրանց միջոցով նոր անդամների ներգրավելու և տեղերում կառույցի ներկայացուցչություններ հիմնելու համար:</p> <p><b>4.3.</b> Ճարտարապետների և ճարտարագետների համահայկական ընկերակցության, ԿԱՅԹ արվեստի</p>
--	--	---

		<p>զարգացման հիմնադրամի համագործակցությամբ մայիսի 5-ին Հայաստանի ճարտարապետների միությունում կազմակերպվել է «Պատմությունը ճարտարապետության և երաժշտության մեջ» բանախոսական-երաժշտական միջոցառումը՝ նվիրված ճարտարապետ Ռոմեո Ջուլիակյանի հիշատակին: Այս նախագիծը միջոցառումների շարք է, որի նպատակն է բացահայտել ազգային ինքնության նկարագիրը որպես տարբեր մշակութային ոլորտներում առկա ընդհանուր օրինաչափությունների հավաքական ու փոխկապակցված մի համակարգ:</p> <p><b>4.4.</b> Մայիսի 28-ին Նախագահի նստավայրում տեղի ունեցած Հանրապետության տոնի առթիվ պետական պարզևների և կոչումների շնորհման արարողության ժամանակ ճարտարապետների և ճարտարագետների համահայկական ընկերակցության (ՃՃՀԱ) համանախագահ Գոհար Թությունջյանը պարզևատրվել է Երախտագիտության շքանշանով Հայրենիք-Սփյուռք կապերի խորացման և ընդլայնման գործում ունեցած նշանակալի ավանդի համար:</p> <p><b>4.5.</b> Հունիսին Քաթարում ՃՃՀԱ տեղի ներկայացուցչության նախաձեռնությամբ ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը հանդիպել է Քաթարի հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Քաթարի հայ մասնագետների գործունեությունը և մասնագիտական ներուժը ի շահ հայրենիքի ծառայեցնելու հնարավորություններն ու ճանապարհները:</p> <p><b>4.6.</b> «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականի «Հայ ճարտարապետներն աշխարհում» խորագրի ներքո հարցազրույցներ են կազմակերպվել ճարտարապետների և</p>
--	--	--

		<p>Ճարտարագետների համահայկական ընկերակցության խորհրդի անդամների հետ:</p> <p><b>5.</b> Իրավաբանների համահայկական խորհրդաժողովը ստեղծվել է 2009 թվականի սեպտեմբերի 20-ին՝ իրավաբանների համահայկական առաջին համաժողովի արդյունքում: Մինչ օրս կազմակերպվել է իրավաբանների համահայկական 3 համաժողով:</p> <p>Ներկայումս շարունակվում են աշխատանքներն Ավստրիայում և Բելգիայում Իրավաբանների հայկական ասոցիացիա հիմնելու ուղղությամբ:</p> <p>2015 թվականին «Իրավաբանների համահայկական խորհրդաժողով» ՀԿ խորհրդին կից Հայոց ցեղասպանության իրավական թղթածրարն ամբողջականացնելու նպատակով ստեղծված գիտավերլուծական կենտրոնում շարունակվում են քննարկվող հիմնախնդրի ուսումնասիրության և թղթածրարի նախապատրաստման ուղղությամբ տարվող աշխատանքները:</p> <p><b>6.</b> «Հայկական առևտրային ցանց» կազմակերպությունը ստեղծվել է 2011 թվականի ապրիլի 29-30-ը Երևանում կայացած իր առաջին հիմնադիր ժողովի ժամանակ:</p> <p><b>6.1.</b> Կազմակերպությունը մասնաճյուղեր ունի ԱՄՆ-ում, Ավստրալիայում, Մերձավոր Արևելքում և Եվրոպայում: Աշխատանքներ են տարվում ցանցը ընդլայնելու ուղղությամբ: Աշխատանքների արդյունքում Պորտուգալիայում ստեղծվել է «Պորտուգալիա-Հայաստան» առևտրային պալատ:</p> <p><b>6.2.</b> Հունիսի 28-ին ՀՀ սփյուռքի նախարարությունում տեղի է ունեցել տեսաժողով Հայկական առևտրային ցանցի (ATN), «Բելգիա-Հայաստան», «Պորտուգալիա-Հայաստան» առևտրային</p>
--	--	---

		<p>պալատների ներկայացուցիչների և կանադահայ, ամերիկահայ և ֆինլանդահայ գործարարների հետ: ՀԱՅ-ի կողմից ներկայացվել է Հայաստանում ներդրումների իրականացման ուղղությամբ տարված աշխատանքները, որից հետո տեղի է ունեցել անդրադարձ Հայաստանում բիզնես միջավայրի բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքներին:</p> <p><b>6.3.</b> Հայ առևտրարդյունաբերական ցանցի (ՀԱՑ) 3-րդ համաժողովը անցկացվել է սեպտեմբերի 20-ին Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողովի շրջանակներում:</p> <p><b>7.</b> Հայ բժիշկների տարբեր կառույցներ են գործում Հայաստանի և աշխարհի տարբեր երկրներում, բայց չկա ընդհանուր մի հարթակ, որի միջոցով հնարավոր լինի համակարգել աշխատանքները: Ելնելով այս և այլ առաջադրանքներից՝ ՀՀ սփյուռքի նախարարությունը աշխատանքներ է իրականացնում Հայ բժիշկների համահայկական ընկերակցություն ստեղծելու ուղղությամբ: Այս նպատակով ՀՀ սփյուռքի նախարարությունում տեղի է ունեցել հանդիպում Երիտասարդ բժիշկների հայկական ասոցիացիայի, Հայաստանի երիտասարդ ակնաբույժների ասոցիացիայի ղեկավարների հետ, քննարկվել են հետագա անելիքները: Նախաձեռնությունը միացել են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- ВИВА. Врачи и Волонтеры-Армении (Մոսկվա, ՌԴ)</li> <li>- Armenian medical scientific community (AMSC) (Մոսկվա, ՌԴ)</li> <li>- «Մեծ Բրիտանիայի հայ բժիշկների ասոցիացիա» կազմակերպությունը</li> <li>- «Ֆայդեք» հիմնադրամ (Արգենտինա)</li> <li>- «Ստամբուլյան» հիմնադրամ (Լատինական Ամերիկայի երկրներ, լաբորատորիանների ցանց)</li> </ul>
--	--	---

		<p>- PLAS (Արգենտինա):</p> <p><b>7.1.</b> Մարտի 20-ին ՀՀ սփյուռքի նախարարությունում տեղի է ունեցել ԱՄՆ-ի, Կանադայի, Արգենտինայի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Լիբանանի հայ բժիշկների մասնագիտական կառույցների ներկայացուցիչների հետ տեսաժողով, որի ընթացքում քննարկվել են Հայ բժիշկների համահայկական ընկերակցության, հայ բժիշկների համահայկական հարթակ ստեղծելու հարցերը, ինչպես նաև Հայ բժիշկների 12-րդ համաժողովի հետ կապված հարցեր:</p> <p><b>7.2.</b> «Ֆայդեք» և «Ստամբուլյան» հիմնադրամների հիմնադիր նախագահ Դանիել Ստամբուլյանի նախաձեռնությամբ, ՀՀ սփյուռքի նախարարության գործուն աջակցությամբ մայիսի 31-ից հունիսի 2-ը Արգենտինայում կայացել է Հայ բժիշկների 12-րդ համաժողովը, որին մասնակցել են 660 բժիշկներ, բուժքույրեր և այլք՝ 10 երկրից: Հայաստանից համաժողովին մասնակցել է 40 հոգի՝ այդ թվում ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը և այլ պաշտոնատար անձինք:</p> <p><b>7.3.</b> Աշխատանքներ են տարվում Հունաստանի, Ռումինիայի Բուլղարիայի և Բելգիայի հայ համայնքների հետ՝ նշված երկրներում հայ բժիշկների ասոցիացիա հիմնելու ուղղությամբ:</p> <p><b>8.</b> ՀՀ սփյուռքի նախարարությունը ստեղծման օրվանից համագործակցում է լրատվամիջոցների համահայկական ընկերակցության հետ՝ մասնավորապես կազմակերպելով Լրագրողների համահայկական համաժողովները:</p> <p><b>8.1.</b> Փետրվարի 10-ին Լրատվամիջոցների համահայկական ընկերակցության հետ համագործակցությամբ կայացել է Լրագրողների համահայկական համաժողովները համակարգող</p>
--	--	---

		<p>նիստ, որի ընթացքում քննարկվել են ՀՀ-ում տնտեսական ներդրումների խրախուսման, «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժման, ինչպես նաև օտարերկրյա լրագրողների այցելություններ Արցախ կազմակերպելու վերաբերյալ հարցեր:</p> <p><b>8.2.</b> Հունիսի 8-ին Լրատվամիջոցների համահայկական ընկերակցության հետ համագործակցությամբ կայացել է Լրագրողների համահայկական համաժողովները համակարգող նիստ, որի ընթացքում քննարկվել են Հայաստան-Մփյուռք համահայկական 6-րդ համաժողովի լուսաբանմանն առնչվող հարցեր:</p> <p><b>8.3.</b> Դեկտեմբերի 11-ին Լրատվամիջոցների համահայկական ընկերակցության հետ համագործակցությամբ կայացել է Լրագրողների համահայկական համաժողովները համակարգող նիստ, որի ընթացքում քննարկվել են 2018 թվականին կայանալիք Լրագրողների համահայկական 9-րդ համաժողովի կազմակերպական հարցեր:</p> <p><b>8.4.</b> «Հայապահպանության գործում նշանակալի ավանդի համար» մրցանակաբաշխության 2016 թվականի «Մփյուռքի լավագույն լրատվամիջոց» անվանակարգի մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկվել է Լրատվամիջոցների համահայկական ընկերակցության նախագահը: Փետրվարի 10-ին կայացած հանձնաժողովի ամփոփիչ նիստում որոշվել են մրցանակակիրները:</p> <p><b>8.4.</b> Լրատվամիջոցների ընկերակցության աջակցությամբ սփյուռքյան մամուլը տպագրում և տարածում է ՀՀ սփյուռքի նախարարության ծրագրերի մասին տեղեկատվություն:</p>
--	--	--